

## ՏՈՎԻԼԻ ՄԷՋ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ



Նախագահներ՝ Պարաֆ Օպամա, Տիմոթի Մետոլետտե և Նիքոլա Սարբոզի Թրանսայի Տոլիլ Բադաբի մէջ կայացած «Մեծ Ութնեակի» ժողովի ընթացքին

Ֆրանսայի Տոլիլ քաղաքին մէջ տեղի ունեցած «Մեծ Ութնեակի» գագաթաժողովի ընթացքին Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսայի նախագահները միտակցաբար շարունակեցին հրապարակած են Լեոնայի Ղարաբաղի լուծման վերաբերեալ:

Եւրոպայի Ապահովութեան և Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) Մինսկի խումբի համանախագահող երկիրներու ղեկավարները Հայաստանի և Ատրպէյճանի նախագահներուն կողմէն՝ «քաղաքական կամք ցուցաբերել և Յունիսին կայանալիք իրենց գագաթաժողովի ընթացքին աւարտին հասցնել կարգաւորման հիմ-

նարար սկզբունքներու շուրջ աշխատանքը»:

Յունիսին Ռուսաստանի Կազմակերպութեան մէջ տեղի կ'ունենայ Ռուսաստանի, Հայաստանի և Ատրպէյճանի նախագահներու հերթական հանդիպումը:

«Ուժի կիրառումը հանգեցուցած է առճակատման և անկայունութեան այսօրուայ վիճակին, որու կրկնութիւնը կը տանի միայն նոր տառապանքներ ու աւերածութիւններ և կը դատապարտուի միջազգային հանրութեան կողմէ: Մենք կողմ կ'ընենք կողմերու առաջնորդներուն՝ իրենց երկիրներու

Շաբ.ք էջ 4

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ ԿՈՂՁՈՒՆԵՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Մայիս 26-ին, Հայաստանի Ազգային Ժողովը հաստատեց համաներումի մասին օրէնք, որու հիման վրայ բանտերէն ազատ արձակուեցան ընդդիմադիր բազմաթիւ գործիչներ, որոնց շարքին՝ Ազգային Ժողովի նախկին պատգամաւոր Սասուն Միքայէլեանն ու «Հայկական Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը:

Հայաստանի իշխանութիւններու այս քայլը արժանացաւ միջազգային կառույցներու կողմէ դրական արձագանգի:

Եւրոպական Միութեան արտաքին յարաբերութիւններու ու ապահովութեան քաղաքականութեան բարձրագոյն ներկայացուցիչ և Եւրոպական Յանձնաժողովի փոխնախագահ Քեթրին էշթընն ողջունեց Հայաստանի մէջ համաներում յայտարարելու մասին որոշումը:

«Ջերմօրէն կ'ողջունեմ Հայաստանի նախագահի կողմէ առաջարկուած և Մայիսի 26-ին խորհրդարանի կողմէ հաստատուած ընդհանուր համաներումը: Ես նաեւ կ'ողջունեմ նախագահ Սարգսեանի նախաձեռնութիւնը՝ վերսկսելու 2008 թուականի ընտրութիւններուն յաջորդած դէպքերու հետաքննութիւնը», - ըսած է էշթընը, Երկուշաբթի, Մայիս 30-ին տարածուած յայտարարութեան մէջ:

«Ասոնք կարեւոր զարգացումներ են Հայաստանի համար, որոնք կը համապատասխանեն Եւրոպայի Միութեան կողմէ երկար ժամանակէ հնչած պահանջներուն և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատութիւններու և մարդու իրաւունք-

ներու զրասնենակի առաջարկներուն: Կը քաջալերեմ Հայաստանի քաղաքական ուժերուն օգտուելու այս առիթէն՝ վերսկսելու իրենց երկխօսութիւնը»:

Իր կարգին Եւրախորհրդարանի նախագահ Եթի Պուզէկ ողջունեց Հայաստանի մէջ Սասուն Միքայէլեանի և Նիկոլ Փաշինեանի, իսկ Ատրպէյճանի մէջ էջնուլա Ֆատուլաեւի ազատ արձակումը:

«Ես կ'ողջունեմ Հայաստանի խորհրդարանի և Ատրպէյճանի նախագահի որոշումները՝ խղճի բանտարկեալներու ազատ արձակման վերաբերեալ: Վստահաբար կրնամ ըսել, որ այս մէկը քայլ է ճիշդ ուղղութեամբ: Յոյս ունիմ, որ երկխօսութիւնը և խօսքի ազատութեան, լրատուամիջոցներու բազմակարծութեան, ընդդիմութեան և քաղաքացիական հասարակութեան նկատմամբ աւելի բաց վերաբերմունքը առաւել կ'ամրապնդուի», - Հայաստանի մէջ Եւրամիութեան պատուիրակութեան Երկուշաբթի տարածուած հաղորդագրութեան համաձայն ըսած է Եթի Պուզէկ:

ԵԱՀԿ-ի գործող նախագահ Աուդրոնիոս Աժուբալիս բարձր գնահատեց Հայաստանի իշխանութիւններու որոշումը՝ համաներումամբ ազատ արձակել 2008 թուականի նախագահական ընտրութիւններուն յաջորդած հանրահաւաքներու ընթացքին բանտարկուած մասնակիցներուն:

«Ես անկեղծօրէն կ'ողջունեմ այդ որոշումը, որ նոր էջ կը բանայ ընդդիմութեան հետ երկխօսութեան գործընթացին համար

Շաբ.ք էջ 5

## ՍԴՅԿ, ՅՅԴ, ՌԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ



Ջախէն աջ՝ Մայիլ Խառապեան, Սեդրակ Անեմեան և Հրանդ Մարգարեան

Մայիս 30-ին ՍԴԿ Երեւանի կենտրոնական գրասենեակէն ներս տեղի ունեցաւ հայ ազգային երեք կուսակցութիւններու՝ ՍԴԿ, ՌԱԿ, ՀՅԴ գերագոյն մարմիններու ղեկավարներու՝ Սեդրակ Անեմեանի, Մայիլ Խառապեանի և Հրանդ Մարգարեանի հանդիպումը, որու ընթացքին քննարկուեցան համահայկական օրակարգի ձեւաւորման և համագաղթին նշանակութիւն ունեցող շարք մը հարցեր:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ

Մայիս 30-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի անդրանիկ նիստը, որ կը վարէր Յանձնաժողովի նախագահ, Սարգսեանը:

Նախագահի մամուլի գրասենեակի տարածած տեղեկութիւններուն համաձայն, երկրի ղեկավարը իր բացման խօսքին մէջ մասնաւորապէս ըսած է. - «Հայոց Յեղասպանութեան հարցը մարդկութեան դէմ գործած այդ յանցագործութիւնից 96 տարի անց դեռ բաց է բոլորիս՝ իւրաքանչիւր հայի համար»:

«Մենք խաղաղ ժողովուրդ ենք, որ պատրաստ է որպէս հաւասարէ հաւասարի հետ, արժանապատուութեամբ խօսել, քննարկել և համագործակցել բոլորի հետ, այդ թւում նաեւ՝ իր հարեւանների հետ: Սակայն անկախ որեւէ բանից, մենք երբեք չենք հանդուրժելու Հայոց Յեղասպանութեան ժխտու-

մը և անարգանքը մեր անմեղ նահատակների յիշատակի հանդէպ»,- Ըսած է Սերժ Սարգսեան:

Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի առաջին նիստի օրակարգային հարցերու շարքին եղած է յանձնաժողովի խորհրդատուական խումբ ձեւաւորելու մասին հարցը, որմէ ետք ՀՀ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան ներկայացուցած է Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող տարածաշրջանային յանձնախումբերու ձեւաւորման և իրականացուող աշխատանքներու համադրման վերաբերեալ հարցը:

Նիստի ընթացքին ՀՀ Արտաքին Գործերու նախարար Էդուարդ Նալբանդեան յանձնաժողովին ներկայացուցած է արտերկրի Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ աշխատանքներու վերաբերեալ հարցը:

# ԵՐԲ ԹՈՂ ԸՆՈՒՆԱՅ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ

## ՅԱԿՈԲԱԴԱԼԵԱՆ

Երբ Սերժ Սարգսեանը նոր էր դարձել Հայաստանի նախագահ, նա կարծես արտասահմանեան մի լրատուամիջոցի հարցազրոյց էր տուել, ասելով, որ իր գլխավոր խնդիրը Ղարաբաղի հարցը կարգաւորելն է եւ եթէ ինքը հասնի դրան, ապա կը հեռանայ իշխանութիւնից:

Մէկը կարող է կասկածել Սերժ Սարգսեանի ազնուութեանը, մէկը կարող է անվերապահ հաւատալ նրան՝ դատելով այն Չերմեռանդ մոլորակներից, որով Սերժ Սարգսեանն իր նախագահութեան արշալոյսին ձեռնամուկ եղաւ այսպէս ասած տարածաշրջանային ինտեգրացիային ուղղուած քայլերին:

Բայց իզուր է Սերժ Սարգսեանն այդքան հեռու նշածող սահմանել իր համար: Աւելին, դա նոյնիսկ անհնարին թուացող նշածող է մի քանի պատճառով. նախ՝ Ղարաբաղի հարցը լուծուած է դեռեւս 1994 թուականից: Պարզապէս լուծումն ամրագրուած է: Եւ այստեղ է նաեւ երկրորդ պատճառը, որ անհնար է դարձնում Սերժ Սարգսեանի գլխավոր խնդրի լուծումը՝ Ղարաբաղի հարցի լուծումն ամրագրուած է այն պարզ պատճառով, որ դրանից յետոյ ոչ մի կերպ չլուծուեց աւելի կարեւորի՝ հայկական պետականութեան՝ Հայաստանի հարցը:

Քանի դեռ Հայաստանի հարցը լուծուած է, Ղարաբաղի հարցի լուծումն ամրագրելը լինելու է անհնար:

Իսկ ինչ է նշանակում Հայաստանի հարցի լուծում: Դա նշանակում է Հայաստանի արդիականացում՝ ժողովրդավարական, քաղաքացիական հասարակարգի կառուցում, Սահմանադրութեան եւ իրաւունքի բացարձակ գերակայութիւն, մշակութային, հոգեւոր, տնտեսա-

կան եւ քաղաքական ազատ այնպիսի միջավայրի ձեւաւորում, որը գրաւիչ եւ օրինակելի կը լինի ոչ միայն հայերի, այլ ցանկացած այլ ազգի ներկայացուցիչների համար:

Որքան ուշանում է Հայաստանի հարցի լուծումը կամ կարգաւորումը, այդքան աւելի հեռանում եւ նոսրանում են դրա հնարաւորութիւնները: Հետեւաբար, եթէ Սերժ Սարգսեանը պատմական առաքելութիւն է որոնում, ապա նա այդ որոնումները պէտք է իրականացնի ոչ թէ Ղարաբաղի, այլ Հայաստանի հարցի լուծման տիրոջ թուով:

Կանի արդեօք Սերժ Սարգսեանը բաւարար քայլեր Հայաստանի արդիականացման ուղղութեամբ, ուրեմն կը մնայ պատմութեան մէջ: Ձի անի՝ ուրեմն կը մնայ պատմութեան տակ: Նախագահների համար այլ տարբերակ չկայ. եթէ գիտութիւնը եւ գորահրամանատարների համար տարբերակներն են՝ վահանով կամ վահանի վրայ, ապա նախագահների համար տարբերակներն են՝ պատմութեան մէջ կամ պատմութեան տակ:

Ուրեմն Սերժ Սարգսեանը կամ լուծում է Հայաստանի հարցն ու հեռանում իշխանութիւնից, մնալով պատմութեան մէջ ընդմիջտ, կամ թէ չի լուծում եւ Հայաստանի հետ միասին մնում է պատմութեան տակ: Բայց Հայաստանն իհարկէ անպայմանօրէն դուրս կը գայ պատմութեան տակից, բայց արդէն առանց Սերժ Սարգսեանի: Սարգսեանն իհարկէ ունի Հայաստանի հարցը լուծելու այդպիսի հնարաւորութեան մէջ մնալու մի հնարաւորութիւն՝ հեռանալ, եթէ չի կարողանում լուծել կամ կարգաւորել Հայաստանի հարցը: Հեռանալուց չպէտք է վախենալ կամ ամաչել: Ամաչել ու վախենալ պէտք է հեռացուելուց:

«ԼՐԱԳԻՐ»

# ՊԵՏՔ ԵՆ ԽԵԼԱՄԻՏ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

## ԱՐԱՄ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ

Այն բանից յետոյ, երբ քաղաքատարկեայնորը վերջապէս ազատ արձակուեցին, կարելի է արձանագրել, որ ընդդիմութիւնը հետապնդողի եւ աջակցութիւն պահանջողի դերում է: Հետեւաբար, այն մարդիկ, ովքեր իշխանութեան կամ ընդդիմութեան կողմնակիցներն են, կարող են իրենց աւելի անկաշկանդ գալ: Իհարկէ, եթէ ընտրաշաւի ընթացքում ուստիականական կամ այլ պետական օրգաններ սկսեն ճնշել ՀԱԿ-ի կողմնակիցներին, «գրոյցների» հրաւիրել, սպառնալ եւ շանտաժել (ինչը միանգամայն կանխատեսելի է), դա պէտք է արձանագրել եւ դատապարտել: Բայց այլեւս ոչինչ չի խանգարում քննարկել ՀԱԿ-ի գործողութիւններն ըստ հույսերի:

Եւ այսպէս, ընդդիմութիւնը համարում է, որ իր երեք հիմնական պահանջները կատարուել են եւ, իր ասելով, պայքարելու է միայն մի բանի՝ արտահերթ նախագահական ընտրութիւնների համար: Այդ գաղափարը ինձ, ճիշդն ասած, դուր չի գալիս: Նախ՝ ինձ խոցելի է թւում ընդդիմութեան այն թէզը, թէ արտահերթ ընտրութիւններն աւելի արդար են անցնելու, քան հերթականները: 20 տարում ամենաանարդար ընտրութիւններն անց են կացուել արտահերթ՝ 98 թուականին, երբ իշխանութիւնը (այդ թւում՝ ՀՀԾ-ական նոմենկլատուրան) ամէն ինչ արել է, որպէսզի ընտրողների բացարձակ մեծամասնութեան համակրանքը վայելող Կարէն Դեմիրճեանը չզոհուի նախագահ: Այնուհետեւ՝ բացարձակապէս պարզ է, թէ ինչու է նախապատուութիւնը տրուում նախագահական ընտրութիւններին, երբ գործող Սահմանադրութեամբ նախագահը չափազանց կաշկանդուած կը լինի, եթէ խորհրդարանում մեծամասնութիւն չունենայ: Հետեւաբար, Աժ ընտրութիւններն աւելի կարեւոր են: Վերջապէս, եթէ նպատակը հանդարտ, անցնցում իշխանափոխութիւնն է, ապա արտահերթ ընտրութիւններն արդէն իսկ ցնցում են:

Ինչպիսի՞ իրաւական մեխա-

Փորձենք հասկանալ: Ովքե՞ր են այսօր ոտնահարում մարդու իրաւունքներն ու ժողովրդավարական ազատութիւնները: Պատասխանը միանշանակ է. պետական կառույցներն ու օլիգարխները: Պետական կառույցների ղեպւում ամէն ինչ պարզ է, ինչ-որ կոսմետիկ փոփոխութիւններ են արւում, բայց էական առաջընթաց չկայ: Օլիգարխների ղեպւում նոյնպէս առայժմ միայն ճառեր են հնչում: Բայց ահա Սերժ Սարգսեանը հանդիպում է պետկամուտների կոմիտէի անձնակազմի հետ ու յստակ խնդիր դնում՝ աւելի շատ հարկեր հաւաքել եւ կրճատել ստուերը: Պարզ ասած՝ խօսքն օլիգարխների մասին է: Մի քանի օր առաջ էլ նոյն Սերժ Սարգսեանը գործարարներին է հանդիպում ու մատ թափ տալիս, թէ չլինեմ-չիմանամ՝ հարկեր թաքցնէք: Որպէս ներքաղաքական լարուածութեան թուլացմանն ուղղուած «թամաշա» վատ չէ, բայց հարց է ծագում՝ ինչո՞ւ առ այսօր որեւէ ոլորտում առկայ մենաշնորհը չի

Շար.ը էջ 5

նիզմով են իրականացուելու արտահերթ ընտրութիւնները: Եթէ խօսքը խորհրդարանական ընտրութիւնների մասին է, ապա նախագահը պէտք է լուծարի Ազգային ժողովը: Դա կը լինի պարզապէս ապօրինի քայլ: Թէ ինչ է իրենից ներկայացնում այսօրուայ Ազգային ժողովը, բոլորս գիտենք, բայց օրէնքի տեսանկիւնից միեւնոյն է՝ պատգամաւորները խելացի են, թէ չիմար, կրթուած են, թէ սոցտ. օրէնքը զուտ ձեւական կարգաւորում է տալիս: Այս պահին ոչ մի ձեւական պատճառ չկայ խորհրդարանը լուծարելու, իսկ քաղաքական նպատակայարմարութեամբ շարժուելը հեռու գնացող բացասական հետեւանքների կը բերի: Պայքարել սահմանադրական կարգի համար եւ պահանջել, որ նախագահը հակասահմանադրական գործողութիւն կատարի, այնքան էլ հետեւողական չէ:

Այսպիսով, «արտահերթի» գաղափարն իրականացնելու համար մնում է, որ Սերժ Սարգսեանը հրաժարական տայ: Բայց եթէ նա հիմա այդպիսի բան անի (ինչը գործնականում բացառուած է), դա, իմ կարծիքով, կը լինի իր կողմից չափազանց անպատասխանատու քայլ: Նման թեթեւամտութիւնը չի բնկալուի ոչ Հայաստանում (որտեղ ապրում են ոչ միայն ՀԱԿ-ի երկրպագուները), ոչ էլ, մասաւանդ, միջազգային ասպարէզում:

Համակարգային փոփոխութիւնները, լեզուի միջանու-թեան ձեւաւորումը՝ դրանք, այո, առողջ գաղափարներ են: Յուսով եմ՝ մեր քաղաքական վերնախաւն այդ ուղղութեամբ խելամիտ քայլեր կը մտածի:

«ԱՌԱԻՕՏ»

# ԱՌԱՋ, ՍԱՐԳՍԵԱՆ. ՏԵՂՈՒՄ ԿԱՆԳՆԵԼԸ ՎՏԱՆԳԱԻՐ Է

## ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Մայիսի 28-ի առթիւ Սերժ Սարգսեանի արտասանած ուղերձը պիտի որ շոկի մէջ գցած լինի իշխանական վերնախաւին: Բանն այն է, որ իր այդ ուղերձով Սերժ Սարգսեանը ջախջախում է այն «գաղափարախօսութիւնը», որը վերջին 12 տարիներին իշխել է Հայաստանում, եւ որի արդիւնքում էլ, մեծ հաշուով, ձեւաւորուել են այսօրուայ իշխանութիւնները: Խօսքը հետեւեալ երկու մտքերի մասին է. 1. «Անհատի շահերն ու իրաւունքները սրբազան են այնքան, որքան հաւաքական ազգային շահը»: 2. «Ուժեղ բանակը լաւ է, իսկ ուժեղ, ազատ եւ պաշտպանուած քաղաքացիների բանակը՝ շատ աւելի լաւ»:

Տեսէք, թէ ինչ է ստացուում: Տարիներ շարունակ իշխանութիւնները Հայաստանում կեղծում էին հնարաւոր բոլոր ընտրութիւնները, ոտնահարում էին մարդու իրաւունքներն ու հիմնարար ազատութիւնները, բացառապէս արհամարհում էին ՀՀ Սահմանադրութիւնը, եւ երբ քաղաքական որեւէ ուժ բարձրացնում էր այս հարցերը, պատասխանը նոյնն էր լինում. «Հիմա ժողովրդավարութեան վախտը

չի, պատերազմի մէջ ենք, ու եթէ դուք էդ հարցը բարձրացնում էք՝ ուրեմն ազգի դաւաճան էք»: Բաւարարի չէր ասում, բայց իմաստը դա էր: Պարզ ասած, բոլորն իրենց յանցագործութիւններն արդարացնում էին «փաստացի պատերազմական վիճակով»՝ ապացուցելով այն հանրայայտ իրողութիւնը, որ «ստատակների վերջին հանգրուանը հայրենասիրութիւնն է»: Հիմա յանկարծ Սերժ Սարգսեանն ասում է՝ գիտէ՞ք ինչ, դա այդպէս չի, անհատների շահերը նոյնքան սրբազան են, որքան ազգային շահը, ու միայն ուժեղ բանակ ունենալը շատ քիչ է, որովհետեւ եթէ մարդիկ իրենց երկրում ազատ չեն, ինչո՞ւ պիտի պաշտպանեն այդ երկիրը:

Սա իսկապէս կարելի է անուանել «գաղափարական յեղաշրջում» (Սերժ Սարգսեանն ինքը դա անուանում է «հոգեբանական վերափոխում»), եւ հասկանալի է, որ իշխանական համակարգի ներսում սա շատերին դուր չի գալու: Եթէ, իհարկէ, նրանք լուրջ ընդունեն Սերժ Սարգսեանի խօսքերը: Հետեւաբար, կարեւորագոյն հարցն այս պահին հետեւեալն է՝ իսկ արժէ՞ արդեօք լուրջ ընդունել այդ սոնական ուղերձը:

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՔՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ-ի ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐ ԴՐՈՒԱԾ ՉԷ

Սերժ Սարգսյանի ղեկավարած Հանրապետական կուսակցությանը արտահերթ ընտրությունների նախադրեալներ չի տեսնում:

«Գնում է բաց դիալոգ: Մենք մեր կարծիքը ասել ենք. մեր երկրում ո՛չ իրաւական, ո՛չ քաղաքական պատճառ, չիմք չկայ արտահերթ ընտրությունների անցկացման համար», - Մայիս 30-ին հրաւիրուած ասուլիսում յայտարարեց Հանրապետականի խօսնակ էդուարդ Շարմազանովը՝ պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի այն հարցին, թէ հնարաւոր է, որ իշխանութիւնը Լեւոն Տէր-Պետրոսեանի ղեկավարած Հայ Ազգային Կոնգրէսի հետ երկխօսի արտահերթ ընտրութիւնների շուրջ: Հանրապետական կուսակցութեան խօսնակը ընդգծեց, որ արտահերթ ընտրութիւններ լինում են այն ժամանակ, երբ երկրում լինում է քաղաքական ճգնաժամ, իսկ Հայաստանում այդպիսի ճգնաժամ ինքը չի տեսնում, աւելին՝ անցկացում են «հետեւողական ժողովրդավարական բարեփոխումներ» եւ երկիրը գնում է դէպի ժողովրդավարական զարգացում:

«Մեր երկրում նախագահ Սարգսյանի վարչակարգի ժամանակ իրականացում են լայնա-



ՀՀԿ նխօսնակ է. Շարմազանով

մասշտաբ ժողովրդավարական բարեփոխումներ, որը ողջունում են թէ՛ ԱՄՆ-ի պետդեսպարտամենտը, թէ՛ եւրոպական մեր գործընկերները, թէ՛ հասարակութիւնը, թէ՛ հենց ՀԱԿ-ի առաջնորդը», - կարծիք յայտնեց Հանրապետական կուսակցութեան խօսնակ էդուարդ Շարմազանովը:

Պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի այն հարցին, թէ այդ դէպքում ինչի՞ շուրջ է իշխող Հանրապետական կուսակցութիւնը երկխօսելու ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրէսի հետ, էդուարդ Շարմազանովն ասաց, թէ բոլոր ուժերի հետ կը երկխօսեն երկրի ներքաղաքական, տնտեսական եւ արտաքին քաղաքական կարեւորագոյն հարցերի շուրջ:

ԱՐԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ, - «ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀՆԱՐԱՒՈՐ Է՝ ՓՈԽՈՒԻ»

Երեւանում Մայիսի 31-ին անցկացուել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 20-րդ նիստը, որին ներկայ էր Հայաստանի Հանրապետութեան եւ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը:



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուներու խորհրդի նիստի ընթացքին

Ինչպէս լրագրողների հետ զրոյցում նշեց Հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեանը, նիստին ներկայացուել է հիմնադրամի գործադիր վարչութեան հաշուետուութիւնը 2010 թուականին կատարուած աշխատանքների վերաբերեալ:

«Երբ Արցախում «Հայաստան» համահայկական հիմնադրամն սկսեց ջրագծերի կառուցման ծրագիրը, ԼՂ-ի տարածքի մօտ 80%-ն ունէր ջրամատակարարման խնդիր: Այժմ լուծուած է ամենամեծ՝ քաղաքների խնդիրը, միւս տարի հիմնադրամը կը զբաղուի փոքր գիւղական համայնքներով», - Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստից յետոյ լրագրողների հետ ճեպագրոյցում նշեց Վարդանեանը: «Յուսով եմ, որ եթէ մի տարի էլ մեր ռեսուրսներն ուղղենք ջրամատակարարմանը, ապա գոնէ 30-40%-ի հարցը կը կարողանանք լուծել», - ասաց նա:

Հիմնադրամի տնօրէնը նշեց, որ այս տարի եւս հիմնադրամի կազմակերպելիք դրամահաւաքը ջրի ոլորտին ուղղորդելու ինդրանքով ինքը արդէն իսկ դիմել է ղեկավարութեանը:

«Այս տարի արդէն իսկ ծախուել է 15 մլն դոլար, - նշեց նա: - Գումարի մօտ կէսը տրամադրուած է Լեւոնային Ղարաբաղին, կէսը՝ Հայաստանին: Իրականացուել կամ իրականացման փուլում են նախատեսուած բոլոր ծրագրերը:

Կառուցուել եւ նորոգուել են հիւանդանոցներ, դպրոցներ, մշակութային կենտրոններ, գաղատարներ, գրեթէ ամէն բան ենթակառուցուածքներից»:

Արա Վարդանեանը նշեց նաեւ, որ այսօրուայ քննարկման մաս են կազմել նաեւ անցած 20 տարուայ մէջ Հիմնադրամի գործունէութիւնը, «գործունէութեան այս կերպը՝ նման ծրագրերի միջոցով»: Ըստ նրա՝ հնարաւոր է հիմնադրամի ռազմավարութեան մէջ տեղ գտնեն փոփոխութիւններ:

Ընդհանուր հաշուէքննիչ Վահէ ճազմատարեանը նշեց, որ վերահսկութեան եռաստիճան համակարգն ապահովում է նուիրատուութիւնների տնօրինման նկատմամբ լիարժէք վստահութեան ձեւաորմանը. «Այդ ամէնը կ'երեւի. հարկւրներով դպրոցներ շինած ենք, ճամբաներ, էլեկտրագիծեր անցուցած ենք, ջուր հասցուցած ենք»:

ՀԱԿ-Ը ՊԱՏՐԱՍ Է ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԵՏ ԵՐԿԻՕՍՈՒԹԵԱՆ



Լեւոն Տէր-Պետրոսեան ՀԱԿ-ի հանրահաւաքի ընթացքին համաներմամբ ազատ արձակուած Սասուն Միքայէլեանի եւ Նիկոլ Փաշինեանի հետ

Երեքշաբթի, Մայիս 31-ին կայացած հանրահաւաքում Հայ Ազգային Կոնգրէսի առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ, ՀԱԿ-ի երեք պահանջների կատարման հանգամանքը նկատի ունենալով, իրենք արդէն պատրաստ են «իշխանութեան հետ ֆորմալ, այսինքն պատուիրակութիւնների մակարդակով երկխօսութեան»:

«Առաջիկայ օրերին մենք կ'որոշենք մեր պատուիրակութեան կազմը, որը բաղկացած կը լինի 3-5 հոգուց, եւ իշխանութեանը կը ներկայացնենք երկխօսութեան մեր օրակարգը: Կոնգրէսի օրակարգը յայտնի է՝ արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնների անցկացում: Բաց ղա չի նշանակում, թէ մենք չպէտք է հաշուի առնենք նաեւ իշխանութեան ներկայացրած օրակարգն ու հակառակարկները, այլպէս կը խախտուի կողմերի իրաւահաւասարութիւնը», - յայտարարեց ՀԱԿ առաջնորդը:

ՀԱԿ-ը, չիշեցնենք իշխանութեան հետ երկխօսութիւն սկսելու համար երեք պահանջ էր ներկայացրել՝ Ազատութեան հրապարակի տրամադրումը ընդդիմութեան հանրահաւաքների համար, 2008-ի Մարտի 1-ի դէպքերի բացառացումն պաշտօնական հաւաստագրում եւ բանտերում գտնուող ընդդիմադիրների ազատ արձակում: Ընդդիմութիւնը փաստել էր, որ իրենց երեք պահանջները կատարուած են:

ՀԱԿ-ի հանրահաւաքին մաս-

նակցում էին օրերս համաներմամբ ազատ արձակուած Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Սասուն Միքայէլեանը եւ «Հայկական ժամանակ» օրաթերթի խմբագիր Նիկոլ Փաշինեանը, ովքեր եւս հանդէս եկան ելոյթներով: Ելոյթներ ունեցան նաեւ ընդդիմութեան միւս առաջնորդները:

Գնահատելով ներքաղաքական ներկայիս իրավիճակը՝ Տէր-Պետրոսեանը ասաց, թէ Հայաստանում այժմ տեղի է ունենում այն, ինչ տեղի ունեցաւ արաբական աշխարհում, այն է՝ «համաժողովրդական ճնշման միջոցով արտահերթ ընտրութիւնների պարտադրում եւ իշխանութեան փոփոխութիւն»:

«Սակայն, ի տարբերութիւն արաբական երկրների, մենք ձգտում ենք դրան հասնել ոչ թէ ահաւոր ցնցումներից, տակնուվրայութիւններից ու արիւնահեղութիւնից յետոյ, այլ խաղաղ, սահմանադրական ճանապարհով», - ասաց ՀԱԿ առաջնորդը՝ միաժամանակ շեշտելով, որ «իշխանութեան անդրդուելիութեան պարագայում» իրենց կամքից անկախ, «բացառուած չէ նաեւ արաբական տարբերակը»:

Լեւոն Տէր-Պետրոսեանը անդրադարձաւ նաեւ ՀԱԿ-ի իշխանութիւն «գործարքի» մասին խօսակցութիւններին՝ ասելով, թէ գործարքի մասին «ճամարտակողները», առարկայական եւ հիմնաւոր ապացոյցներ չգտնելով, փորձում են դրա տարբերը որոնել իշխանութեան եւ ՀԱԿ-ի «ղարձաւածաբանութեան-ֆրագելոլոգիայի փոփոխութեան մէջ»:

ՀԱՅՊԱՆԵԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ՉԻ ԿԻՐԱՌՈՒԻ

«Վարդաշէն» քրէակատարողական հիմնարկում գտնուող Սարգիս Հացպանեանի վրայ համաներմումը չի տարածուի: Այս մասին Tert.am-ին յայտնեցին նրա մերձակոր շրջապատից՝ նշելով, որ պատճառը Յաբաթ առաջ նրա նկատմամբ կիրառուած կարգապահական տոյժն է: Խնդիրն այն է, որ Հացպանեանը մինչեւ օրս չի կրում ոչ բանտային յատուկ համազգեստ, ոչ էլ բանտարկեալի տարբերանշան: Հացպանեանը դրանցից հրաժարուած է, քանի որ «որպէս 1915 թուականի Եղեռնը վերապրածի ժառանգ չի ցանկանում կրել նացիստական ճամբարներին յատուկ իրեր»:

Հացպանեանի ֆրանսահայ փաստաբան ժերար Չոլակեանը նրա համաներման հարցով դիմել է Հայաստանի համապատասխան կառույցներին: Փրանսիացի իր գործընկերների միջոցով նա Փրանսիայում արդէն յայտարարութիւն է տարածել, որում նշուած է, որ Հացպանեանի նկատմամբ երկրորդ անգամ անարդարացիօրէն չի տարածուած համաներմումը: Յիշեցնենք, որ ֆրանսահայ Սարգիս Հացպանեանը ազատազրկման է դատապարտուել սուտ մատնութեան մեղադրանքով:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ



Մարդարապատի յուշահամալիրը ուր տեղի ունեցավ Հանրապետության Օրուայ տոնակատարությունը

Մայիս 28-ին Հայաստանի մէջ նշուեցաւ Հանրապետութեան Օրը: Տօնի առթիւ նախագահ Սերժ Սարգսեանի ուղեւորութեամբ, որը տարածել է նախագահի մամուլային գրասենեակը, մասնաւորապէս, ասուած է. - «1918 թուականի Մայիսի 28-ին ծնունդ առած Հայաստանի Հանրապետութիւնը պսակն էր մեր դարաւոր պայքարի: Այն գոյատեւեց ընդամէնը երկուսուկէս տարի: Եթէ նկատի ունենանք, որ այս տարի Սեպտեմբերին պատրաստուած ենք նշել մեր նոր անկախ պետականութեան 20-րդ տարեդարձը, ապա երկու եւ կէս տարին շատ փոքր ժամանակահատուած է ինչ-որ բան հասցնելու համար: Բայց սա միայն առաջին հայեացքից: Իրականում այն ամենամեծ յեղափոխութիւնն էր, որ նոր ժամանակներում կատարուեց հայ ժողովրդի սրտում եւ գիտակցութեան մէջ: Մայիսի 28-ով հայ ժողովուրդը որդեգրում էր արժէքային նոր համակարգ՝ անկախութիւն եւ ժողովրդավարութիւն: Եթէ ներկայիս Հայաստանը ժառանգորդն է առաջին Հանրապետութեան (իսկ դա այդպէս է), ապա առաջին հերթին ժառանգորդն է այդ արժէքային համակարգի»:

Շաբաթ օրը Հայաստանի նախագահը այցելեց Մարդարապատի յուշահամալիր՝ օրհնադիր ու գործադիր մարմինների ղեկավարներին ու ներկայացուցիչներին, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղեկցութեամբ: Մարդարապատում էր նաեւ Լեւոնային Ղարաբաղի նախագահ Բակօ Սահակեանը՝ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդի ուղեկցութեամբ: Սերժ Սարգսեանը ծաղկեպսակ դրեց Մարդարապատի ճակատամարտի հերոսների չիշատակը չաւերժացնող յուշակոթողի մօտ, այնուհետեւ ներկայ գտնուեց Հանրապետութեան տօնի կապակցութեամբ յուշահամալիրում կազմակերպուած ժողովրդական տօնախմբութեանը եւ համերգին: Ինչպէս նախորդ տարիներին, այս տարի եւս հիւրերին դիմաւորեցին երգ ու պարով եւ առատ սեղաններով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Շարունակուած էջ 1-էն  
բնակչութիւնը նախապատրաստել խաղաղութեան, այլ ոչ թէ պատերազմի», - ըսուած է Պարաք Օպամայի, Տիմիդրի Մետվետեւի եւ Նիքոլայ Սարգսի միատեղ յայտարարութեան մէջ: - «Յետագայ ձգձգումը միայն հարցականի տակ կը դնէ կողմերու յանձնառութիւնը՝ հասնելու համաձայնութեան: Երբ համաձայնութիւնը ձեռք բերուի, մենք պատրաստ ենք վկայ ըլլալու անոր պաշտօնական ընդունման, աջակցելու խաղաղութեան համաձայնագրի մշակման եւ յետագային մեր միջազգային գործընկերներու հետ միասին սատարելու անոր կատարմանը»:  
Նախագահները արձանագրեցին, որ կողմերու եւ համանախագահող պետութիւններու ջանքերու շնորհիւ հակամարտութեան կարգաւորման գծով զգալի յառաջընթաց ձեռք ձգուած է:  
«Հիմնարար սկզբունքներու վերջին տարբերակը, որ քննարկուած է Մարտի 5-ին՝ Սոչիի մէջ, հիմք կը ստեղծէ համընդհանուր

խաղաղ կարգաւորման համար: Այդ փաստաթուղթը կողմերուն կարելիութիւն կու տայ յաղթահարելու ներկայիս անընդունելի պայմանները», - ըսուած է յայտարարութեան մէջ:  
Ղարաբաղեան հակամարտութեան շուրջ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի, Ռուսաստանի նախագահ Տիմիդրի Մետվետեւի եւ Ֆրանսիայի նախագահ Նիքոլայ Սարգսի ընդունած երրորդ յայտարարութիւնն է այս: Նախորդ յայտարարութիւնները հրապարակուած էին 2009-ի Յունիս 10-ին եւ 2010-ի Յունիս 26-ին:  
«Այս յայտարարութիւնները համահունչ են հայկական կողմի արտայայտած դիրքորոշումներու հետ եւ յստակ ազդակներ կը պարունակեն՝ ուղղուած Ատրպէյճանի ղեկավարութեան», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոյցի ընթացքին մեկնաբանելով Տովիլի յայտարարութիւնը՝ կարծիք յայտնեց Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցութեան խմբակցութեան քարտուղար Էդուարդ Շարմազանով:

«ԹՈՒՐՔԻԱՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԳՕՏԻ» ԿՐ ԱՍԵՂԾԻ».- THE INDEPENDENT

Բրիտանական The Independent թերթի թղթակից Ռոբերդ Ֆիսքն իր յօդուածում անդրադարձել է թուրքական զօրքերի Սիրիա հնարաւոր մուտքին:  
«Թուրքիան բարկացած է Ասադի վրայ, որովհետեւ նա երկու անգամ խոստացել է բարեփոխումներ եւ ժողովրդավարական ընտրութիւններ անցկացնել, սակայն երկու անգամ էլ չի կատարել իր տուած խոստումները: Թուրքական կառավարութիւնը երկու անգամ պատուիրակութիւն է ուղարկել Դամասկոս, եւ, թուրքերի հաւաստմամբ, Ասադը խաբել է արտգործնախարար Դավութօղլուն՝ խոստանալով, որ ետ կը կանչի իր եղբօր՝ Մահմետի զօրքերը Սիրիայի փողոցներէ: Նա չարեց դա: Դամասկոսի թիւնները շարունակուած են», - նշում է Ֆիսքն իր յօդուածում:  
«Այժմ Թուրքիան, հաշուի առնելով 1991-ի Ծոցի պատերազմի ժամանակ փախստականներ ընդունելու իր փորձը կանխարգելիչ գործողութիւն է պատրաստում: Սիրիայում բնակուող քրդերը կը փորձեն անցնել Թուրքիայի հարաւարարեւելեան քրդաբնակ շրջաններ, ինչպէս եղաւ իրաքեան

քրդերի դէպքում, ուստի թուրք գեներալները դա կանխարգելելու ծրագրեր են մշակում: Մասնաւորապէս, թուրքական զինուոր կը ձեւաւորի «անվտանգութեան գօտիներ»: Թուրքերը պատրաստուած են նման գօտի ստեղծել Քամիշլի քաղաքի եւ Տէր Ջորի միջեւ (մի անապատ, որտեղ իրականացուել է Հայոց ցեղասպանութիւն - Ռ. Ֆիսք)», - ասում է բրիտանական պարբերականի հրապարակման մէջ:  
Սիրիայում քաղաքացիական պատերազմի սկսման դէպքում գաղթականների հոսքը Թուրքիա կանխելու նպատակով թուրքական բանակը պատրաստուած է մուտք գործել Սիրիա եւ այնտեղ ստեղծել անվտանգութեան գօտի:  
Յիշեցնենք, որ վերջերս իսրայէլական Debka կայքը տեղեկացրել էր, որ Սիրիայի նախագահ Պաշար Ալ-Ասադն սկսել է մեծ արագութեամբ կորցնել Թուրքիայի վարչապետ Ռեշիֆ Թայյիփի էրդողանի աջակցութիւնը: Լրատուամիջոցի պնդմամբ՝ էրդողանը նոյնիսկ հրահանգել է Անկարային հնարաւորին ժամանակահատուածում խզել շարքերու թիւնները պաշտօնական Դամասկոսի հետ:

ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԵՍ ՍԵՒ ԺԱՊԱԻՆՆԵՐՈՎ ԲՈՂՈՔ

«Կ'ուզենք ընտրել մեր պատրիարքը» նախաձեռնող խումբը, ի նշան բողոքի, Պոլսոյ Հայոց պատրիարքարանի հիմնադրման 550 ամեակի տօնակատարութիւններու ծիրէն ներս՝ 29 Մայիսին, պատարագի մասնակիցներուն կոչ ուղղած է պատարագին մասնակցիլ կուրծքին ամրացուցած սեւ եւ մանուշակագոյն ժապաւէններով: Այս մասին կը տեղեկացնէ «Ակօս» շաբաթաթերթը:  
Նախաձեռնութեան խումբի անդամները հայ համայնքին ուղղուած կոչով յայտնած են, որ արքեպիսկոպոս Արամ Աթէշեան կը ջանայ դառնալ «առանց ընտրութիւններու պատրիարք»: Մասնաւորապէս ըսուած է, - «Մեր համայնքէն իրականութիւնները թաքցնող ղեկավարութեան տեսքով պատրիարքի աթոռի պատիւը ամէն անցնող օր աւելի շատ կը վնասուի»: Նախաձեռնող խումբը՝ օգտագործելով «արդէն ունինք պատրիարքի փոխանորդ, որ կը յենուի ոչ թէ համայնքի, այլ՝ հաւանութիւն ստացած դիրքի վրայ» յատարարութիւնը կը քննադատէ նաեւ պետութիւնը, որ Աթէշեանին թոյլատրած է հոգեւորականի հանդերձանք հազնիլ: Նախաձեռնող խումբը նաեւ տեղեկացուցած է, որ բողոքի ցուցերը պիտի շարունակեն այնքան, մինչեւ որ թոյլատրեն ընտրութիւններ իրականացնել, - «29 Մայիսին սկսեալ, երբ կը սկսին Պոլսոյ Հայոց պատրիարքարանի հիմնադրման 550 ամեակի տօնակատարութիւնները, նախաձեռնող

խումբը իր ծաւալած գործունէութեամբ եւ նախաձեռնութիւններով պիտի չիշեցնէ համայնքի ընտրութեան սպասումներու մասին: Համայնքի անդամները, որոնք պիտի երթան մեր եկեղեցիները, իրենց կուրծքին պիտի կրեն սեւ եւ մանուշակագոյն ժապաւէններ, այնքան ժամանակ մինչեւ որ, ունենան ժողովուրդի կողմէն ընտրուած պատրիարք: Եթէ համայնքի ընտրութեան պահանջքը անուշադրութեան մատնուի, բողոքը պիտի շարունակուի ամէն օր՝ նորանոր նախաձեռնութիւններով»:  
«Կ'ուզենք ընտրել մեր պատրիարքը» նախաձեռնող խումբէն Յարութ Օգէր ըսած է, որ պետութիւնը պատրիարքի ընտրութիւններուն ժամանակ նախապէս ալ փորձած է նկատի չ'առնել քաղաքացիական մարդոց, սակայն պատրիարքարանի եւ համայնքի դիմադրութեան արդիւնքով հրաժարած է այդ մտադրութենէն: Օգէր ըսած է. «1990-ի պատրիարքի ընտրութիւններէն առաջ, երբ պատրիարք ընտրուեցաւ Գազանձեանը, պետութիւնը՝ նահանգապետարանի միջոցով, դիմադրած է պատրիարքի ընտրութեան: Այդ ժամանակ տեղապահ արքեպիսկոպոս Շահան Սվաճեանն ու համայնքի յայտնի անդամները ըմբոստացած են՝ յայտնելով, որ այդ մէկը դէմ է աւանդոյթներուն, իբրեւ արդիւնք պատրիարք ընտրուած է ժողովուրդի ընտրութեան միջոցով: Այսօրուան ինդիքի հիմքը՝ պատրիարքարանի համայնքը տրորելու դիրքորոշումն է»:



### ԵՐԿԻՍՕՍՈՒԹԵԱՆ ՍՊԻՏԱԿՆ ՈՒ ՍԵԻՐ

#### ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ

Քաղաքական երկխոսութիւնը, ընդհանրապէս, անկասկած նախընտրելի եղանակն է տարակարծութիւններու լուծման եւ կայունութիւնը ապահովելու ճիգերուն: Մանաւանդ, երբ կողմերու համար փոխազանգուած է այդ լուծումն իրագործել առանց անհարկի ցնցումներու եւ վտանգալի, յաճախ արիւնալի առճակատումներու:

Ասիկա ի գօրու է, գրեթէ հաւասարապէս, միջազգային ու ներազգային շարաբերութիւններու մէջ: Երբ բանակցութիւնները դադարին, կապերը խզուին եւ երկխոսութիւնը դադարի վերջնական կարծրացմամբ, այն ատեն բիրտ ուժն է որ կը գրաւէ հրապարակը: Տարակարծութիւններու հարթումի միակ կերպը կը դառնայ պատերազմը՝ ազգերու պարագային, կամ քաղաքացիական կռիւր՝ ներազգային տարբեր ուժերու միջեւ:

Ըսել կ'ուզենք թէ՛ Հայաստանի մէջ տիրող ներկայ պայմաններուն տակ, սկզբունքօրէն դրական ու քաջալերելի քայլ մըն է քաղաքական երկխոսութիւնը որուն կը ձեռնարկեն ընդդիմութիւնն ու իշխանութիւնները:

Սկզբունքէն անդին, սակայն, բանակցութիւններու կիրառական եղանակին ու գործնական մանրամասնութիւններուն մէջն է որ թաքնուած է սատանան: Չար ոգին ծպտուած է հետեւեալ պարզ բայց խաբուսիկ հարցումներուն տակ:

1. Իւրաքանչիւր կողմ ճիշդ ի՞նչ մտահոգութիւններէ դրդուած է եւ ի՞նչ նպատակներ կը հետապնդէ երկխոսութեան միջոցով:

2. Կողմերը ի՞նչ միջոցներ ունին՝ իրականացնելու համար փոխադարձաբար - կամ, այս պարագային, հակադարձաբար - իրենց հետապնդած նպատակները: Ով ի՞նչ լծակներու կը տիրապետէ՝ գանձնք իրագործելու համար:

3. Երկու կողմերն ալ պատրաստ են յարգելու իրենց յանձնառութիւնները: Թէ՞ կողմերէն մէկը գաղտնօրէն պիտի հետապնդէ միւսին վարկաբեկումը, քաղաքական թուլացումը կամ համարեալ չհզոքացումը որպէս նկատառելի ուժ:

Առաջին հարցումը մեկնարկային-սկզբունքային նշանակու-

թիւն ունի: Կողմերու իսկական մտահոգութիւններ կրնան ըլլալ՝ ներկայիս երկրին դիմագրաւած ճգնաժամային խնդիրները - արտագաղթի տակաւ ահապահող հեռանկարները, հասարակական-տնտեսական ահապահող վիճակը (փա՛ռք օլիկարխիան), ներքաղաքական փտախտը, քաղաքացիներու եւ տիրող-գոփող-ասպատակող (առայսօր ամենաճշգրիտ բնորոշմամբ) աւազակապետներու միջեւ անընդհատ լայնցող ու խորացող վիճը, դարաբաղեան հարցի աննպաստ եւ արագ զարգացումները (փա՛ռք քոչարա-սերժեան դիւանագիտութեան որ անձնական հարստացման պարագմունքներէ դուրս վատնելիք ժամանակ չունի նման մանրուքներու, եւ այլն): Այս իմաստով - տա՛յ Աստուած - կրնայ նաեւ հաշուի առնուած ըլլալ՝ Ռոբերտ Քոչարեան կողմէ ախտ-գործօնէն ինքզինք (Սերժ Սարգսեանը) եւ երկիրը (ընդդիմութիւնը) ազատագրելու հասարակաց մտահոգութիւնը երկու կողմերուն համար ալ: Հետապնդուած նպատակներուն, սպասուող արժանատի փոփոխութիւններու շարքին մէջ պէտք է ինչնայ, ամէն բանէ առաջ, երկրի ազգային անվտանգութեան ու պետութեան գոյատեւման իրական երաշխիքներու ապահովումը, ճշմարիտ ժողովրդավարութեան վերահաստատումը, ընկերային խորացող վէրքերու բուժումը, բռնաբարուած օրինականութեան վերադարձը, բոլոր քաղաքացիներու անչապաղ ազատումը, մարտիմէկեան ամէն մակարդակի ոճրագործներուն դատաւարութիւնը, արդար ընտրութիւններու իրական նախապայմաններու եւ ազդու վերահսկողութեան ճշմարիտ լծակներու հաստատումը եւ, սկսելու համար, անյազուրդ օլիկարխիայի հայրենաքանդ ախորժակներու ասնձումը: Երկխոսութեան համար ընդդիմութեան ներկայացուցած շատ համեստ նախապայմանները սկսելու համար են միայն եւ չափազանց ժուժկալ: Անոնք կը վերաբերին իշխանութիւններու ապօրինի անարդարութիւններու վերացման եւ օր առաջ գործադրուած ըլլալու էին՝ ինքզինք յարգող որեւէ ժողովրդավար իշխանութեան կողմէ: Երկրորդ հարցման պատաս-

խանը որոշիչ դեր ունի երկխոսութեան յաջող ելքի եւ փոխադարձաբար գոհացուցիչ եզրակացութեան վրայ: Կասկածէ վեր է իշխանութիւններու ձեռքին մէջ կեդրոնացած նպատատուր խաղաքարտերու գոյութիւնը՝ սկսեալ ուժային կառույցներու օգտագործումով, ու հասնելով մինչեւ ընդդիմադիր դաշտի տարբեր հոսանքներու միջեւ եղած հակասութիւններու անխնայ շահագործումը: Միւս կողմէ, իր լայն ըմբռնումով առած, ընդդիմութիւնը արդէն ի սկզբանէ իսկականապէս տեսարան մը կը պարզէ - Հայ Ազգային Գոնկրէս, Ժառանգութիւն, ՍԴՀԿ, Դաշնակցութիւն, Սարդաբաբա, եւ այլն: Նախատեսուած երկխոսութիւնը արդէն սկսած է յաւելեալ ճեղքեր բանալ ՀԱԿ-ի մաս կազմող կուսակցութիւններու եւ շարժումներու շարքերէն ներս: Այս վիճակը շարաբերաբար աննպաստ հարթութեան վրայ կը տեղադրէ ընդդիմութիւնը: Ընդդիմադիր դաշտի անխտիր բոլոր կազմակերպութիւններու գոտաշուժութիւնը եւ աչալըջութիւնը միայն օգուտներ կրնայ ապահովել երկխոսութեան հայրենաշէն ելքին որպէս սատար:

Երրորդ հարցման պատասխանը սկսած է սպասուածէն աւելի կանուխ տրուել, մանաւանդ իշխանութիւններուն կողմէ: Նախ, անոնք

### ԱՌԱՋ, ՍԱՐԳՍԵԱՆ

#### Շարունակուած էջ 2-էն

վերացել: Հիմա հարցին նայենք այլ տեսանկիւնից: Ենթադրենք՝ Հայաստանի ունեւ նախագահ (խօսքը Սերժ Սարգսեանի մասին չէ) անկեղծօրէն ուզում է պայքարել մենաշնորհների դէմ եւ այդպիսով գոնէ տնտեսական կեանքում ապահովել մարդկանց իրաւունքներն ու ազատութիւնները: Միանգամից անել չի կարող, որովհետեւ օլիգարխները, որպէս կանոն, տնտեսական եւ ֆինանսական ուսուրաններից բացի նաեւ քաղաքական լծակներ ունեն՝ պատգամաւորներ են: Հետեւաբար, առաջին քայլը պիտի լինի նրանց քաղաքական դաշտից դուրս մղելը: Այդ գործը կարծես թէ «ցրցամ է տրուել»: պարբերաբար յայտարարուած է, որ յաջող խորհրդարանում օլիգարխների առկայութիւնը ցանկալի չէ եւ չի խրախուսուելու: Հասկանալի է, չէ՞, որ քաղաքական լծակներ չունեցող օլիգարխների դէմ պայքարն աւելի հեշտ եւ անցնցում կը լինի: Բայց այստեղ էլ առաջանում է յաջողի հարցը՝ իսկ ի՞նչ անել, եթէ օլիգարխների դէմ պայքարողն ինքն օլիգարխ է: Պատասխան. գործընթացը յաջողութեամբ կը պատկերի միայն այն դէպքում, եթէ օլիգարխիաների դէմ պայքարողն ինքն օլիգարխ չէ: Հակառակ դէպքում արդիւնքում կ'ունենանք «մէկ օլիգար-

չթահամարով է որ կաթիլ առ կաթիլ կու տան իրենց արդէն ժլատ խոստումները: Այս տողերը գրուելու պահուն, վերջերս կալանքի տակ եղող վեց քաղաքատարկեալներէն միայն երկուքը - Նիկոլ Փաշինեանն ու Սասուն Միքայէլեանը - ազատ արձակուած են առայժմ: Դեռ բանտարկուած կը մնան Սարգիս Հացպանեանը (անձնական քրեախնդրութեան հետեւանքով՝ ըստ իր իսկ վկայութեան), Արա Յովհաննիսեանը, Շմաւոն Գալստեանն ու Մուրատ Բոջոբեանը: Մարտի Մէկի ողբերգութիւններու իսկական պատասխանատուներու վերաբերեալ բովանդակագուրկ խօսքերէ անդին իրական քայլեր նշմարելի չեն տակաւին: Իսկ արտահերթ ընտրութիւնները իշխանաւորներու կողմէ բացառուած կը համարուին, մինչ ընդդիմութիւնը այդ պահանջը կը նկատէ երկխոսութեան բանալի կէտերէն մին: Կանխանշանները դժբախտաբար ցոյց կու տան թէ իշխանութիւններու նպատակն ու աշխատելակերպը չեն փոխուած ըստ էութեան: Անոնց քաղաքականութեան հիմնաքարը կը մնայ՝ իշխանութեան եւ օլիգարխներու միահեծան տիրապետութեան յաւերժացումը:

Կը մաղթենք սխալած ըլլալ: Մինչ այդ՝ բարի երթ խաղաղութեան ճշմարիտ առաքեալներուն:

Խի պետութիւն»: Եւ խնդիրն, ի դէպ, այն չէ՛ այդ «մէկ օլիգարխն» ինքը ազնուօրէն հարկեր վճարու՞մ է, թէ՛ ոչ: Խնդիրն այն է, որ ուրիշները նոյնպէս պիտի հնարաւորութիւն ունենան բիզնէսով զբաղուել եւ հարկեր վճարել:

Հիմա վերադառնանք Սերժ Սարգսեանին: Դատելով ելույթներից՝ նա անկեղծօրէն փորձում է Հայաստանը դարձնել նորմալ երկիր: Բայց իրաւագիտութեան մէջ այսպիսի տերմին կայ՝ «գործուն գոյում»: Այսինքն՝ ելույթները պիտի հիմնաւորուեն «գործուն» քայլերով: Կը գնայ՞ Սերժ Սարգսեանը կոնկրետ քայլերի՝ Կոնգրէսը, կարծում ենք, կ'օգնի նրան: Չի՞ գնա՞ Կոնգրէսը ստիպուած կը լինի ինքը դիմել կոնկրետ քայլերի: Յամենայն դէպս այսօր տպաւորութիւնն այնպիսին է, թէ Սերժ Սարգսեանը փորձում է ինչ-որ բան անել եւ ժողովրդի կողմից «թիկունքն ապահովելու» խնդիր է լուծում: Եթէ այդպէս է, ապա իսկապէս հետաքրքիր իրավիճակ է ստեղծուել: Սերժ Սարգսեանի թիկունքում ժողովուրդն է, դիմացը՝ կոռումպացուած համակարգն ու օլիգարխները: Եւ մեզ մնում է միայն ասել՝ «Առաջ, Սարգսեան»: Տեղում կանգնելը վտանգաւոր է, որովհետեւ ժողովուրդը, միեւնոյն է, առաջ է գնալու:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՅՅՆԵՐԸ ԿՈՂՁՈՒՆԵ

#### Շարունակուած էջ 1-էն

Եւ կը շնորհաւորեմ երկրի իշխանութիւնները՝ այս քայլի համար», - ըսած է Աժուբալիս:

«Հաւաքներու եւ խօսքի ազատութիւնը ԵԱՀԿ-ի բոլոր մասնակից երկրներու առանցքային պարտաւորութիւններէն է եւ մենք յոյս ունինք, որ Հայաստանի իշխանութիւնները կը շարունակեն հետամուտ ըլլալ այդ պարտաւորութիւններու կատարման եւ որ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները տեղի կ'ունենան միջազգային չափանիշներուն համապատասխան: ԵԱՀԿ-ն, անոր կառույցները եւ երեւանեան գրասենեակը պատրաստ են օգնելու Հայաստանին՝ այդ հարցով», - ըսուած է ԵԱՀԿ-ի տարածած յայտարարութեան մէջ:

Միացեալ Նահանգներու դեսպանութիւնը եւս ողջունեց Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ առաջարկուած

եւ Ազգային ժողովի կողմէ յայտարարուած համաներումը, ինչպէս նաեւ 2008 թուականի Մարտի 1-ի դէպքերու առնչութեամբ անազատութեան մէջ գտնուողներու արագ ազատ արձակումը:

«Միացեալ Նահանգները հաւատարմաբար է, որ օրէնքի գերիշխանութիւնն ու ժողովրդավարական հաստատութիւնները հիմնարար կարեւորութիւն ունին Հայաստանի անվտանգութեան եւ քաղաքական ու տնտեսական զարգացման համար», - ըսուած է Հայաստանի մէջ ԱՄՆ-ի դեսպանութեան պաշտօնական կայքէջին վրայ տեղադրուած հղորդագրութեան մէջ: - «Մենք կը շարունակենք հաւատարիմ մնալ մեր յանձնառութեան՝ աջակցելու Հայաստանի կառավարութեանը պատշաճ իրաւական ընթացակարգերու, հանրահաւաքներու ու խօսքի ազատութեան ամրապնդման եւ բաց, կենսունակ ու ծաղկուն հասարակութեան աջակցելուն ուղղուած քայլերուն»:

**ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91107  
 Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506

# RADIKAL-Ի ԹՂԹԱԿԻՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՍՕՏ ՍՊԻՏԱԿ ՄԵԽԱԿՆԵՐ ԴՐԵՑԻ՝ ՍԳԱԼՈՎ 1915-Ը

Թրքական Radikal օրաթերթի թղթակից Հաքքը Օզդարը թուրք եւ հայ լրագրողների խմբի հետ Թուրքիայում եւ Հայաստանում իրականացրած աւտոբուսային շրջագայութեան ընթացքում ստացած տեղեկութիւններն ու տպաւորութիւնները հրատարակել է. «Երեւակայութիւնից մինչեւ իրականութիւն. ինչքան հեշտ է լինել բարեկամ» վերնագրով:

Երեւանի մամուլի ակումբի, «Ինտերնյուս Հայաստան» ՀԿ-ի եւ Ստամբուլի մշակույթի համալսարանի «Գլոբալ քաղաքական միտումների կենտրոնի» կողմից կազմուած նախագիծը շատ արդիւնաւէտ անցաւ: Հրատարակումս կը սկսեմ Երեւանից, քանի որ տպաւորութիւնները դեռ շատ ուժեղ են:

Հայաստանը 3 մլն բնակչութիւն ունեցող փոքր երկիր է: 1915-ից յետոյ աշխարհի 4 կողմերը ցրուած եւ այսօր «սփռուք» կոչուող միլիոնաւոր հայերի կողքին Հայաստանի բնակչութեան թիւը բաւականին համեստ է: Չնայած դառնութիւններով լեցուն պատմական իրադարձութիւններին, ստեղծական եւ քաղաքական ինտելիցենցիան, հայաստանցիները լեցուն են հայրենիքի հանդէպ սիրով եւ քինախնդիր չեն: Հայաստանում կան իսօքի ազատութեան հետ կապուած ինտելիցենց, սակայն հայերն ունեն ուժեղ չուսմորի զգացում, պատրաստ են ծիծաղել եւ ծիծաղեցնել: Յաւալի է, որ Հայաստանում կայ գրաքննութիւն, սակայն դա տեղեկատուութեան մէկ այլ կողմ է ուժեղացրել: Հայաստանում ծագող աստղը՝ ինտերնետ մեդիան է:

Մեր հետ էր նաեւ 4 լեզուով, այդ թւում թրքերէնով լուրեր հրատարակող հայկական NEWS.am-թղթակիցը, ով Թուրքիան շատ մօտիկից էր ճանաչում: Նոյնիսկ երբ մեր գրողների ժամանակ որեւէ թուրք պաշտօնեայի անուն չէինք յիշում, նա էր մեզ անունը յուշում:

Մեր ուղեւորութեան ամենահումորով մասնակիցը Երեւանի մամուլի ակումբից Հայկակ Արշամեանն էր, ով պատմաբան է, Կիլիկիայի գծով մասնագէտ: Նա ողջամտօրէն է մեկնաբանում հայ ժողովրդի պատմութիւնը եւ մէկն է նրանցից, ովքեր երկու ժողովուրդների միջեւ առողջ եւ ապագայ ունեցող ճանապարհ են փնտռում:

Մէկ օր Ցեղասպանութեան յուշահամալիրում...  
Ցեղասպանութեան յուշահամալիրում...

մալիրն ու թանգարանը երկրի ամենակարեւոր խորհրդանիշներից են: Ոչ միայն Ապրիլի 24-ին, այլ՝ ամէն օր մարդիկ այցելում են այնտեղ: Համարեա բոլոր զբօսաշրջիկներն այցելում են եւ ծաղիկներ դնում: Մեր հայ գործընկերները քաղաքավարի հարցնում են. «Կը ցանկանա՞ք այցելել յուշահամալիրը»՝ պատրաստ լինելով հասկանալ մեր բացասական պատասխանը: Իհարկէ, գնում ենք: Տխուր երաժշտութեան եւ մարմնինքն փշաքաղցնող բացարձակ լուրթեան ներքոյ իմ ձեռքի սպիտակ մեխակները յաւերժական կրակի մօտ եմ դնում, փակում աչքերս եւ սգում 1915-ը.....:

«Նրանք(հայերը) գնացին, մենք կորցրեցինք»

Մեր երկշաբաթեայ աւտոբուսային շրջագայութիւնը սկսեց Ատանայի Քոզան(Սիս) քաղաքից: Յաւալ, առիթ չունեցանք հին Կիլիկիայի այդ քաղաքում աւտոբուսից իջնելուց, որտեղ 1909-ին տեղի էին ունեցել հայերի առաջին զանգուածային ջարդերը:

Ատանայի «Չուքուրովալի(Կիլիկիա) երիտասարդ գործարարների միութեան» հետ հանդիպմանը մեզ հիասթափութիւն եւ տհաճ մի տեսարան էր սպասում: Ատանայի գործարարները նախ թոյլ չտուեցին նկարահանել հանդիպումը՝ իրենք էլ չիմանալով թէ ինչու: Մեր խմբի անդամները հետաքրքրուեցին, թէ Հայաստանի հետ գործարար յարաբերութիւններ կա՞ն, եւ ստացանք «չգիտենք» պատասխանը: Չնայած, որ հանդիպման սկզբում նրանք ասել էին, թէ պատմական իրադարձութիւնները թողնենք պատմութեանը, կրկին խորասուզուեցին պատմութեան մէջ: «Դուք նշում էք ձեր Ապրիլի 24-ը, իսկ ինչո՞ւ չկայ կոտորուած թուրքերի յիշատակման օր», - հարցնում են նրանք հայ լրագրողներին: Թէ ո՞ւր են ուզում հասնել այս հարցով, հասկանալի չէ, սակայն իսօսակցութիւնը լարուած ընթացք է ստանում: Յետոյ միութեան նախագահը հանդարտեցնում է մթնոլորտը: Թուրքիայում մեր շրջագայութեան համար սա վատ սկիզբ էր: Սակայն Տիարպեքիրում մեզ յուսադրող մթնոլորտ էր սպասում:

Տիարպեքիրի քաղաքային Օսման Բայդեմիրի աշխատասենեակում...  
Մար.ք էջ 17

# THE JERUSALEM POST. «ԼԱՒ Է ՈՒՇ, ՔԱՆ՝ ԵՐԲԷՔ»

ՏԱԹԵԻԿԻԿ ԼԱՋԱՐԵԱՆ

The Jerusalem Post-ը «Հայերը, հրեաները եւ իսրայէլը» վերնագրի ներքոյ յօդուած է հրատարակել:

Յօդուածի հեղինակը իսրայէլի խորհրդարանի՝ Քնեսետի նախկին աշխատակից է: Նա գրում է, որ թուրքերը պատասխանատու են 1915-16 թուականներին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ աւելի քան մեկկէկէս միլիոն հայերի կոտորածի համար: Եւ չնայած մինչեւ վերջերս իսրայէլը անտեսում էր Օսմանեան կայսրութիւնում իրականացուած ցեղասպանութեան փաստը, հրէական կազմակերպութիւնները եւ Մեծ Բրիտանիան տեղեկութիւն ունեցել են կատարուողի մասին:

«Առաջիններից մէկը, ով զգուշացրել է ոճրագործութեան ընդթի եւ մասշտաբների մասին, եղել է Աարոն Աարոնսոնը՝ յայտնի գիւղատնտես, ով ստեղծել է «Նիլի» լրտեսական ցանցը, որը պատերազմի ընթացքում տեղեկութիւններ էր հաւաքում օսմանեան գործերի տեղաշարժի վերաբերեալ եւ փոխանցում բրիտանական իշխանութիւններին», - ասում է The Jerusalem Post-ի յօդուածում:

Աարոնսոնի որոշ բարեկամներ եւ գործընկերներ ականատես են եղել արիւնահեղութեանը: 1916 թուականի Նոյեմբերին Աարոնսոնը բրիտանական իշխանութիւններին գրութիւն է ուղարկում՝ նկարագրելով տեղի ունեցող վայրագութիւնները:

Դրանից մէկ ամիս առաջ նա նամակ էր ուղարկել դատաւոր Ջուլիան Մակին՝ Ամերիկայի հրէական համայնքի ազդեցիկ ղեկավարներից մէկին, փորձելով համոզել նրան բրիտանամէտ դիրքորոշում ընդունել: Նամակում Աարոնսոնը նկարագրել է նաեւ հայերի կոտորածն ու մտավախութիւն յայտնել, որ հրէաները եւս կարող են նոյն վիճակում յայտնուել, եւ որ Օսմանեան կայսրութեան այդ քաղաքականութիւնը մշակուել է Գերմանիայում:

«Օսմանեան կայսրութիւնը Գերմանիայի դաշնակիցն էր պատերազմում, եւ երբ Աարոնսոնը գրում էր այս նամակը, շատ հրէաներ գերմանամէտ կամ չէզոք դիրքորոշում ունէին», - մեկնաբանում է The Jerusalem Post-ի յօդուածագիրը՝ յաւելելով, որ իսրայէլը չի կարող յայտարարել, որ տեղեկ չի եղել, թէ ինչ է կատարուում հայերի հետ Օսմանեան կայսրութիւնում:

Ու չնայած այս վկայութիւններին՝ մինչեւ վերջերս իսրայէլը նախընտրում էր աչք փակել այդ իրադարձութիւնների վրայ, բազմաթիւ արդարացումներ եւ պատճառներ բերելով, ինչը ամօթալի է յատկապէս իսրայէլի համար, ընդգծում է յօդուածագիրը:

Ինչպէս նշում է թերթը, առաջին արդարացումն այն է, որ թուրքիան հերքում է, թէ հայերի կանոնաւոր եւ ծրագրուած կոտորած է իրականացրել եւ նուազեցնում է նաեւ ցեղասպանութեան գոհների թիւը, եւ քանի որ թուրքիան այն եզակի մասնեղական երկրներից է, որ իսրայէլի ռազմավարական դաշնակիցն է հանդիսանում, իսրայէլը լաւ կ'անի «չարթնացնի քնած շանը»:

Հայերի ցեղասպանութիւնը չընդունելու երկրորդ արդարացումը կապուած է այն հանգամանքի հետ, որ իսրայէլում մտավախութիւն կայ, թէ հայերի հետ կատարուածը ցեղասպանութիւն որակելը կարող է նուազեցնել Հոլոքոսթի հրէշաւորութիւնը: Իսրայէլցիների այս վերաբերմունքը տարածուած է նաեւ ցեղասպանութեան այլ դէպքերի վրայ, ինչը, յօդուածագրի կարծիքով, ոչ միայն անհիմն է, այլեւ ամօթալի, թէեւ «հրեաների Հոլոքոսթը, անկասկած, եզակի է իր ընդթովով»:

Յօդուածի հեղինակը ամօթալի է համարում այն, որ իսրայէլը վերջապէս որոշել է հրատարակայնօրէն իստել Հայոց ցեղասպանութեան մասին միայն այժմ, երբ աննախադէպ վատացել են իսրայէլի եւ Թուրքիայի յարաբերութիւնները:

Տարիներ շարունակ իսրայէլի խորհրդարանում փորձեր են արուել այս հարցի շուրջ հանրային քննարկումներ կազմակերպել, սակայն միայն այս տարուայ Մայիսի 18-ին է վերջապէս որոշում կայացուել բաց քննարկում անցկացնել այս հարցով՝ Քնեսետի կրթութեան, մշակույթի եւ սպորտի յանձնաժողովում, որում քննարկումը հրատարակային է եւ ամբողջութեամբ տեղադրուած է իսրայէլի խորհրդարանի կայքում:

«Ոչ ոք դէմ չէ, որ այս հարցը քննարկուի յանձնաժողովում, եւ բոլոր ելույթ ունեցողները՝ աջից ձախ, կրօնականից մինչեւ աշխարհիկ, կողմ են արտայայտուում: Այժմ միայն մէկ բան կարելի է ասել՝ լաւ է ուշ, քան՝ երբեք, սակայն ամօթալի է, որ սա այսքան երկար է ձգուել», - եզրափակում է The Jerusalem Post-ի յօդուածագիրը:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---



A.A. INSURANCE SERVICES

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԸ ԿԸ ՄԵԾԱՐԻ ԳԸՆԱՆՈՒԹ ԿԸ ԱՐՈՒԵԱՏԱԳԵՏ ԶԱՐԼ ԱԶՆԱԿՈՒՐԸ

Հայաստանեայց Եկեղեցու չիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի հովանիին ներքեւ գործող Հայ Օգնութեան Ֆոնտը վայել շուքով նշեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակը, այս առթիւ մեծարելով Հայ ժողովուրդի արժանաւոր գաւակ եւ միջազգային համբաւի տիրացած արուեստագէտ Չարլ Ազնաւուրը:

Այս հանդիսութիւնը, որ կը վայելէր Արեւելեան Թեմի Առաջնորդ եւ Հայ Օգնութեան Ֆոնտի նախագահ Գերշ. Տ. Խաթակ Արք. Պարսամեանի նախագահութիւնը, տեղի ունեցաւ տարւոյս Մայիս 20-ին՝ «Իփրիանի Ուօլ Սթրիթ» շքեղ հանդիսասրահին մէջ:

Աւելի քան 600 անձեր, որոնց կարգին դիւանագէտներ, դերասաններ եւ երաժիշտներ, ներկայ գտնուեցան այս նախաձեռնութեան եւ իրենց յարգանքի տուրքը մատուցին աշխարհի ամենէն աւելի յաջողութիւններ արձանագրած երաժիշտին՝ Չարլ Ազնաւուրին, որ նուաճելով հանդերձ համբաւի գագաթները չէ մոռցած իր հայկական արմատները:

Հայկական, Ամերիկեան եւ Ֆրանսական օրհներգներու երգեցողութեանէն ետք՝ ճոխ յայտագիր մը գործադրուեցաւ:

Օրուան հանդիսավարն էր Ծանօթ դերասան եւ հեղինակ Էրիք Պօղոսեան, որ խօսեցաւ Ազնաւուրի տաղանդին, որպէս երգիչ եւ դերասան արձանագրած յաջողութիւններուն եւ բարեսիրական ծրագիրներուն մասին, որոնց շնորհիւ ան յատկապէս սիրուած դէմք մըն դարձած է ամբողջ աշխարհի մէջ:

Բարի գալուստեան խօսքին մէջ Հայ Օգնութեան Ֆոնտի ատենապետ Տիար Ռանտի Սապահ-Կիւլեան ըսաւ. «Հայաստանի հանդէպ մեր ունեցած սէրը մեզ իրարու գողած է: Եւ այս գիշեր մենք մէկտեղուած ենք պատուելու համար արուեստագէտ մը, տեսլապաշտ մը եւ մեծապէս պարկեշտ անձնաւորութիւն մը եւ Հայաստանի սիրելի գաւակը՝ Չարլ Ազնաւուրը»:

Միայն հագուազիւտ անհատներ կրնան նուաճել միջազգային երաժշտական աշխարհը եւ նոյն ատեն օգտագործելով իրենց անունը, միջոցներն ու կարողութիւնները՝ բարելաւել ժողովուրդներու կեանքը ամբողջ աշխարհի մէջ:

Այսպիսի անձ մըն է Չարլ Ազնաւուրը, որուն մարդասիրական գործունէութեան շնորհիւ բարելաւուած է կարօտեալ Հայերու կենսամակարդակը Հայաստանի մէջ եւ այլուր:

Հայաստանի Սպիտակ եւ Կիւմրի քաղաքներու 1988-ի ահաւոր երկրաշարժէն ետք, որ մօտ 50,000 հայրենակիցներու կեանքերը խլեց, Ազնաւուր հաստատեց «Ազնաւուր Հայաստանի Համար» բարեսիրական կազմակերպութիւնը, որուն շնորհիւ արուեստագէտը օգնութիւն փութացուց Հայաստանի աղէտեալներուն:

Աշխարհի ուշադրութիւնը հրաւիրելով Հայաստանի վրայ, երկրաշարժէն ամիս մը ետք, 89 արուեստագէտներու մասնակցութեամբ պատրաստեց իր հեղինակած «Քեզի համար, Հայաստան» երգի սկաւառակը, որ միջազգային ճանաչման արժանացաւ եւ միայն Ֆրանսայի մէջ երկու միլիոն օրինակ ծախուեցաւ:

Ազնաւուրի համերգներուն շնորհիւ հանգանակուած գումար-մատենիկ մը՝ «նուրբ եւ քնքուշ գեղեցկութեամբ» (Հ. եւ Հ. Բուշ-հառագէն):


Աւելի մանրամասնութիւններ, մանրանկարչութեան պատկերներ եւ նմանատիպը գնելու պայմանները կարելի է տեսնել համացանցի մէջ՝ [www.faksimileworld.com](http://www.faksimileworld.com), հայերէն, գերմաներէն, անգլերէն, ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուներով:

Նմանատիպի համար կանխիկ վճարողները կը ստանան նաեւ բացառիկ գին: Այդ բացառիկ գինի համար նախապէս որոշուած ժամանակը երկարաձգուած է մինչեւ տարեվերջը:

Հայ արուեստի եւ գրքի սիրահարներուն համար սոյն նմանատիպը պիտի ըլլայ իսկապէս մնայուն վայելք, կամ մասնաւոր բարեկամի մը տալու համար՝ մեծարժէք նուէր:



Առաջնորդ Սրբազան Հայրը յուշանուէրը կը յանձնէ մեծարեալին



Հանդիսավար Էրիք Պօղոսեան

ները օգտակար կը հանդիսանային Հայաստանի կարեւոր նախաձեռնութիւններուն, ինչպէս մասնակցներու պաշտպանութեան, կրթու-




Ատենապետ Ռանտի Սապահ-Կիւլեան

թեան, առողջապահութեան եւ մանաւանդ Հայաստանի տարեց քա- Մար.ք էջ 18

### ՄԻՍԻՍԻԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԵՌԱԳՐԻ ՄԸ ՆՍԱՆԱՏԻՊԸ (FACSIMILE) ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵ

Միսիսիան Միաբանութիւնը 2011 թուականին կը տօնէ իր Վիեննա հաստատուելու 200-ամեակը:



Այդ առիթով Վիեննայի մէջ Մայիսին եւ Երեւանի մէջ Հոկտեմբերին տեղի պիտի ունենան գանազան հանդիսութիւններ՝ Ս. պատարագ, գիտաժողով, ցուցահանդէս, եւն., երկու քաղաքներուն մէջ ալ լոյս պիտի տեսնեն դրոշմաթուղթեր եւ յուշամետալներ:

120 տարի առաջ՝ 1891 թ. Մայիսի 27-ին մահկանացուն կնքեց խոշորագույն երգիծաբան Յակոբ Պարոնեանը

## ԱՐՄՆԵՆ ԳԼՃԵԱՆ

Պարոնեանի ստեղծագործական անհատականությունը մէկ «գաղափարաբան» չունէր, ինչպէս կարծել է Օշականը: Նա մեծ, բազմաձիւղ անհատականություն էր՝ գրող երգիծաբան (որը գրել է երկու լեզուով), թատերագիր (որը ստեղծել է հայ գրականության լավագոյն կատակերգութիւնները), արձակագիր (որը նշանաւորել է արեւմտահայ գրականութեան որակական բարձր աստիճան թեւակոխելը), հրատարակագիր (որը թերթեր է հրատարակել երկու լեզուով), գրաքննադատ ու տեսաբան (որը սերնդակից շատ քննադատներին Ուսուցիչ է հանդիսացել), մանկավարժ (որը կրթական ազգային ծրագիր է մշակել, հայ մանկական առաջին պարբերականը հրատարակել), քաղաքագետ (որը Հայկական հարցի վերաբերեալ մի ամբողջ տեսութիւն է շարադրել), թարգմանիչ (որը հիմնաւոր տիրապետելով լատարէն եւ ֆրանսերէն լեզուներին՝ հին ու նոր դասական գրականութիւնից բազմաթիւ թարգմանութիւններ է կատարել): Պարոնեանի տաղանդի հնարաւորութիւնների մասին է վկայում նաեւ այն, որ երիտասարդ տարիներին մի կարճ ժամանակահատուած դերասանութիւն է արել Կ. Պոլսի Նաուսի թատրոնում: Պարոնեանի անհատականութիւնն իր դրոշմն է դրել նրա ստեղծագործութեան վրայ: Գրողը կերտել է դարաշրջանը խորհրդանշող բացառիկ բովանդակալից կերպարներ, որոնք բանականութեան եւ ողջախոսութեան դիտակետից ներկայացնում են աշխարհի եւ հաստատում իրականութիւնը գեղեցկացնելու գաղափարի կենսական անհրաժեշտութիւնը: «Եթէ կայ բան մ'որ աւելի մեծ է քան Պարոնեանի համարը, այն է իւր ինքնատիպ, իմաստավայել եւ հետաքրքրաշարժ նկարագիրը», - դիտել է Սանտալեանը:

Գրողը մի առիթով ընդգծել է. մենք «գործիք ըլլալու համար չենք ստեղծուած», այլ՝ «գործաւոր»: «Աւելի կը սիրեմ խոտ ուտել եւ ուղիղ մարդ մնալ, քան պնակ լիզել եւ բարիք վայելել», - սիրել է կրկնել նա:



Պարոնեանը կենսաբի տարբեր շրջաններում վերահաստատել է, թէ ինքը նման է Քամին՝ մարդկութեան առաջին ճշմարտասէր եւ արդարադատ հերոսին: Ես, գրել է նա, թէկուզեւ «մահկանացու» եմ, բայց հզոր ներուժ եմ գգում մէջս եւ պատրաստ եմ հսկայի նման անգամ «անմահներն ալ ծաղրել», եթէ նրանք շեղուեն ճանապարհից:

Պարոնեանի անհատականութիւնն ու երգիծանքի փիլիսոփայութիւնն ընկալելու տեսակետից կարեւոր է նկատի ունենալ, որ Քամն այն մարդն է, որը, մի կողմից, ցաւով դիտակցել է, որ Հին Աշխարհի կործանման պատճառը Հին Մարդկութիւնն էր, որը սխալ ուղի էր բռնել ու մեղքերի մէջ թաղուել, միւս կողմից, տագնապել է Նոր Մարդկութեան, նրա մաս կազմող հայութեան ապագայի համար՝ նկատի ունենալով նրանց որդեգրած արատաւոր ընթացքը:

Գրողն իրեն նմանեցրել է նաեւ հին յունական դիցաբանութիւնից յայտնի Ասկղեպիոսին (Ասքլիպոսին): Վերջինս լուսի եւ արուեստների հովանաւոր Ապոլոնի որդին էր՝ յայտնի իբրեւ բժիշկներ եւ բժշկութեան արուեստի աստուած: Ասկղեպիոսն իր բժշկութեամբ կարողանում էր կենդանութիւն տալ մեռելաւորներին, որի պատճառով գայրացնում է մեռելաւորի թագաւորութեան տիրակալ Հադեսին (քանի որ մտնում է նրա իրաւասութեան տիրոջ թիւերը) եւ աստուածների հայր Չեւսին (քանի որ խախտում է երկրի վրայ նրա սահմանած կարգն ու օրէնքը): Ասկղեպիոսը, միաժամանակ, վայելում էր մարդկանց դիտակցուած սէրն ու մեծաւարմքը, քանի որ բոլորը հասկանում էին, որ նա դարմանելու կարողութիւնն օգտագործում է յանուն մարդկութեան բարօրութեան:

Պարոնեանը, հոգու մէջ կրելով Քամին, Ասկղեպիոսին, ընթացել է մեծ մարդկանց ուղիով: Անհատականութեան մէջ ընդգծուել է, մասնաւորապէս, Նիցշէի արտայայտութեամբ ասենք, տիեզերական կեցութեան «դիտիւսեան» նախասկիզբը, որը նրա ծիծաղի եւ երգիծանքի աղբիւրն է:

Ամէն ինչի մէջ միայն ծիծաղելի կողմ տեսնելու մղումը, ինչպէս յայտնի է, մակերեսային մտածողութեան հետեւանք է: Պարոնեանի անհատականութեան մէջ հական տեղ է գրաւել նաեւ «ապոլոնեան» նախասկիզբը, երբ գարմանայի ներքին կազմակերպուածութիւնն ունեցող գրողը դրսեւորում է «ներդաշնակութեան հանճար», ստեղծած բազմազան ձեւերի մէջ տիրում է կայունութիւն, կարգ, ամբողջութիւն եւ մե-

ծագոյն հանգստի ձգտում: «Իմ գրիչս» ունի երկու թեւ, նշել է գրողը, բայց ես նրա «մէկ թեւին փետուրները կտրած եմ»: «Հարկն», այսինքն, դարաշրջանի ռեալութիւններն են թելադրել այդպէս վարուել: Նա է պայմանաւորել իմ ստեղծագործութեան երգիծական սեռը: Եթէ հանրային կենսական պահանջը թելադրի, ես իմ «գրչով» կարող եմ «յանդգնիլ» նաեւ «հանճարաւոր եւ հռչակաւոր անձերի» «փառքը գրելու»:

Պարոնեանը գտարիւն հայ մտաւորական մարդու եւ անհաւատարէլի արուեստագէտի տեսակին է պատկանել: «Պարոնեանի հետ խօսակցելով մարդ կը գգար թէ մեծ խորհող մը եւ իմաստասիրութեան հոյակապ ուսուցիչ մը կայ իւր առջեւ», - հաւատում է Սանտալեանը: Նաեւ՝ «ձենթըմէն» է եղել. սիրել է ինքը հիւրասիրել եւ վճարել: Մերժել է չհիմնաւորուած նպատակներն ու աջակցութիւնը՝ գտնելով, որ դրանք խորքի մէջ կաշառքի նրբին ձեւեր են:

Պարոնեանը հանրային ասպարէզում օգտուել է բացառապէս գաղափարական գէնքերից: Մերժել է հայհոյանքը: Շատ լուրջ է վերաբերել իր կրթութեանը. առանց յոգնութեան կատարելագործել գրական գարգացումը: Նա իմացել է հայերէն (աշխարհաբար ու գրաբար), ֆրանսերէն, յունարէն, իտալերէն, անգլերէն, թրքերէն եւ պոլկարերէն: «Իր կարդացած հեղինակներուն գալով, - վկայել է Սանտալեանը, - միշտ կը նախընտրէր հիներն: Արդէն Հելլենական եւ Հռոմէական նշանաւոր հեղինակաց ընթերցումներով անած էր...»: «...Կատարեալ գաղափար ունէր ամէն մասնաւորութեան» եւ ամէն ժանրերի վերաբերեալ:

Պարոնեանն իր հոգու պարտքն է համարել արուեստի հարցերում կողմնորոշել քննադատներին ու գրողներին: «Միտով յանձն կառնինք սորվեցունել քեզի այս երկու օբերաններուն նիւթի, ոճի եւ ձեւերու մասին իրարմէ ունեցած տարբերութիւններն», - գրել է ծանօթ քննադատներից մէկին, - սակայն քու ապերախտութիւնդ պատճառ եղաւ, որ քեզի դասատու ըլլալից գոլով, եւ դուն ալ ասանկ տգէտ մնաս» (10,28):

Գրողը մտերիմներին հաւատացրել է, թէ չի հաւատում Աստուծոյ, սակայն դիտումները յուշում են, որ սրտի խորքում նրա գոյութիւնը, այնուամենայնիւ, ընդունել է:

Հայ հասարակութիւնը Պարոնեանի ձակարակներում ունեցել է «ծանր, բախտորոշ անդրադարձ», - նկատել է Օշականը: «Պարոնեան այդ ընթերցողներուն կը պարտի անշուշտ իր թշուառութեան մէկ կարեւոր մասը: Բայց, միւս կողմէն, այդ մարդերն են, որ կ'ընեն կարելի իր մտքին անուղղը»: Ժամանակակիցները գիտակցել են նրա անհատականութեան ուժը, եւ դա է պատճառը, որ, մի կողմից, «բոլոր աւագները, հայն ու թուրքը» ոչ միայն «կը ստակային Պարոնեանի գրիչին տակ ինչպէս», այլեւ նրա դէմ յաճախ «դաշնակցած են»: Միւս կողմից, նոյն «...մարդիկ կը խենթեանային Պարոնեանին վրայ, գայն հալածելով հանդերձ՝ կը պատկառէին իրմէ»:

Գրողը ազգի եւ մարդկութեան առաջադիմութեան գործին անմասնցող նուիրուելու դիմաց ոչինչ չի պահանջել: «...Ի՞նչ էր մեր ուզածը. լսեցէ՛ք, ազգ եւ ազինք, մեր ուզածն

էր երկու հարիւր բաժանորդ, որ կը վճարէ, եւ մենք այս երկու հարիւր թիւը տեսնելու հարժանացանք մեր տասը տարուան խմբագրական կենսաբի մէջ», - գրել է նա դառնութեան մի պահի: «...Քիչ անգամ վաւերական գրագէտ մը մեր մէջ այս աստիճան չիմար եղած է, իր հանդէսը լեցնելէ ետքը՝ գայն տպագրելու համար ալ իր հացը ծախելու», - նկատել է Օշականը:

Գրողն այն համոզմունքն է ունեցել, թէ մարդկութիւնը պէտք է ձգտի լիաբուռն վայելել երկրային դրախտն այնպէս, որ ժամանակը մարդկանց «ուրախութեան վրայ նախանձելով» անցնի: Հարուստ մարդիկ արժանի են դաժան ծեծի, եթէ այս ճշմարտութիւնը չեն ըմբռնում եւ իրենց հնարաւորութիւնից լիաբուռն չեն օգտուում, ընդգծել է նա: Պարոնեանը նմանութիւն է տեսել գագացմունքների եւ գինու միջեւ: Զգացմունքները խտացնում են մարդու հոգեկան-գեղագիտական աշխարհի հարստութիւնը, իսկ գինին՝ երկրային վայելքներն ըմբռնելու կարողութիւնը: Ուստի, երկուսին էլ պէտք չէ «ջուր խառնել»:

Ասատուրը կենսաբի վայելքների եւ ռաբլեական ծիծաղի նկատմամբ գրողի ունեցած բուռն հակման վերաբերեալ ուշագրաւ վկայութիւն է թողել. Պարոնեանն երիտասարդական տարիներին Ադրիանուպոլսում ու Կ. Պոլսում, երբ հնարաւորութիւն է ունեցել, Հորացիոսի նման, «գուարթ բարեկամների հետ» «չուսչ ու զբօսասէր կենսաբ» է անցկացրել՝ «կնոջ ու ալքոլին բոլոր հրապուրները» վայելելով եւ «չուսասանքի մէջ խնդրելով իր երիտասարդ աւելները»: Նաեւ. «Պարոնեան երիտասարդութեան ժամանակ գեղեցիկ սեռ ալ սիրած է օղիի չափ»: Գրողի երկրային հաճոյքներից է եղել նաեւ նարգիլի ծխելը: Ստեղծագործական երկունքի պահեւորին կոկորդը թրջել է գինու կամ օղու կենսաբեր հեղուկով: Գինովացել է՝ քիչ խմելով: Գինով ժամանակ, ընկերութեան մէջ, շատ հրապուրիչ է եղել:

Գրողի հաճոյքներից են եղել զբօսավայրեր գնալը, արեւելեան աշուղների երգը լսելը, երաժիշտներին դրամ նուիրելը: Նախընտրել է հայկական (հոգեւոր), նաեւ՝ արեւելեան երաժշտութիւնը: Քայլելիս, աշխատելիս, մէկին ծաղրելիս քիչ տակ տնտնացել է ժողովրդական որեւէ եղանակ: Զուարթութեան վայրկեաններին իւրայինների համար մանիպուլեթ է երգել եւ քանոն նուագել:

Նա հայ երեխաներին յորդորել է անհուն սիրով սիրել Մասիսը, այն լեռը, որը «հարիւրաւոր դարերէ ի վեր իշխող թագաւորի մը պէս հաստատ կեցած է Հայաստանի մէջ»: «Մասիսն աւելի ի՞նչ կայ մեծ, վսեմ եւ հիանալի»:

Պարոնեանը, երբ արդէն ծանր հիւանդ էր, իրեն այցելած ծանօթների հետ գրուցելիս կատակել, սրախօսել է, մինչեւ որ դաժան հիւանդութիւնը, նեղելով կուրծքը, ազդու կերպով չիջեցրել է իր մասին: Նա մահուան անկողնում անգամ չի կորցրել առողջանալու յոյսը, թէկուզեւ երբեմն խորհրդածել է, թէ. «Մահուան այնքան մօտ երթալի վերջ ետ դառնալ խենթութիւնն չէ՞ մի»: Քիչ յետոյ, սակայն, ոտքի է ելել եւ, դեղատոմսը ձեռքին, կենս-

# ԻՆՉ ԲԱՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՒԱՆԵՐԸ ՉԵՆ ԶԱՄԱՐՁԱԿԻՐ ԱՆԿԵՂԾՕՐԷՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԵԼՈՒ

## ԼԻԻՍԻՏԷՕՔՄԷՃԵԱՆ

Երեխաներն ալ ունին իրենց փոքր ու մանկական հոգերը:

Անոնք երբեմն կը փափաքին գիտնալ խնդրանքը մեզի հասնելու ձևը, որուն միջոցով կ'ուզեն մեզի «սորվեցնել» կամ մղել մեզի՝ որպէսզի միջամտենք եւ ազատենք զիրենք՝ իրենց մեծ եղբոր կամ քրոջ իշխանութենէն: Ստորեւ կը գտնուին կարգ մը խրատներ, որոնք ծնողքը գերծ կը պահեն չհասկցող եւ նեղացուցիչ մօր կեցուածքէն:

Անկեղծօրէն պէտք է խոստովանուիլ, որ ծնողքն ալ նոյնպէս իրենց զաւակներուն կը մտահոգեն, պէտք եղածէն աւելի ճնշում բանեցնելով անոնց վրայ: Երբեմն նոյնիսկ յուսախաբ կ'ընեն իրենց պզտիկներուն՝ անոնց հարցերուն չափազանց խառնուելով կամ բնաւ մօտեցում ցոյց չտալով: Հոգեբանութիւնը գոյութիւն ունի մեզի օգտակար դառնալու համար: Ան մեզի կախարհական խրատներ չի տրամադրեր, այլ տրամաբանական ցուցմունքներ կու տայ, ինչպէս օրինակի համար այս պարագային՝ յարգել մեր երեխաները եւ ականջ տալ անոնց խօսածներուն:

«Չեմ հանդուրժեր համբոյրներդ»

Կարգ մը փոքրիկներ չեն հանդուրժեր շարժուածքներով ու համբոյրներով արտայայտուող զգացումները: 8-9 տարեկանէն սկսեալ, առաւօտէն մինչեւ իրիկուն հաբոյր տալն ու առնելը կը նշանակէ, թէ ենթական տակաւին երեխայի տեղ դրուած է:

Մինչ այդ, մասնաւորաբար այդ տարիքին, զաւակը կը փափաքի քեզի ցոյց տալ, որ ինք մեծցած է այլեւս: Տղաքը ի մասնաւորի, կը

գարշին այսպիսի երեւոյթներէ, փորձելով հեռու մնալ իրենց մայրերէն, կտրելու համար այդ «տարփոտ» յարաբերութիւնը:

Միշտ մտածէ, որ պզտիկը կրնայ սիրել քեզի առանց քու ստեղծած առիթներու: Թոյլ տուր, որ զգացական արտայայտութիւնները իր ընտրած ժամանակին տեղի ունենան: Իսկ եթէ մէկ անգամ ետ մղէ քեզի, մի ջղայնանար ու մի նեղուիր:

«Յուշատետրս կարդացեր ես»

Չաւակը այս արարքը դաւաճանութիւն կը համարէ: Այն ծնողքը, որ այսպիսի բան կը կատարէ, երեխային կարեւորութենէն պակասեցուցած կ'ըլլայ: Իւրաքանչիւր անձ պէտք ունի անձնական ազատութեան՝ իր գաղտնիքներու պարտէզին: Այն ծնողքը, որ մոտք կը գործէ այս «պարտէզ»ը, ընդհանրապէս մտահոգ կ'ըլլայ. ան կ'ուզէ գիտնալ ի՞նչ կը պատահի եւ զաւակը ի՞նչ ձեւով կը մտածէ իր մասին, մոռնալով որ այդ հարցերուն մասին գիտնալու այլ ձեւեր գոյութիւն ունին:

Յարգէ՛ պզտիկիդ անձնականութիւնը: Պէտք է անպայման գիտնաս իր կեանքին բոլոր իրադարձութիւններն ու դէպքերը, ոչ ալ պէտք է հարիւրաւոր հարցումներ հարցնես իրեն, երբ դպրոցէն վերադառնայ: Եթէ ան կ'ուզէ պատմել ու արտայայտուիլ, բնականաբար կը խօսի արդէն: Սակայն եթէ չի փափաքիր, ուրեմն ան ունի իր անձնական պատճառները:

Եթէ պատահաբար երեխայիդ յուշերու տետրակը ձեռքդ անցնի եւ դուն չկրնաս անոր մէջէն քանի մը տողեր կարդալու փափաքը դիմադրել, այդ կրնայ հասկնալի ըլլալ: Բայց եթէ իր պահարանը խառնես այդ տետրակը գտնելու

եւ անոր մէջ արձանագրուած տողերը կարդալու նպատակով, այս բոլորովին ուրիշ հարց մըն է:

«Գաղտնիքներս բացի սուրի» Առանց որեւէ գէշ նպատակի եւ նոյնիսկ առանց անդրադառնալու, մայր մը կրնայ խօսիլ իր տղուն կամ աղջկան վերաբերող գաղտնիքի մը մասին: Մայրը, իր ունեցած գիտակից ու չափահաս աղբիւրներուն համաձայն կրնայ խորհիլ, թէ այդ «գաղտնիք»ը պարզապէս «երեխայամտութիւն» է, հետեւաբար, իրեն այնպէս կը թուի, թէ ինք սխալմամբ որեւէ կարեւոր տեղեկութիւն բացի չտուաւ: Բայց գաղտնիքին տէրը մեծ կարեւորութիւն կու տայ այս հարցին:

Մի՛ մոռնար երեխաներուն մէջ գտնուող բնական կասկածը:

Եթէ ան օր մը բան մը պատմէ քեզի, հարց տուր իրեն եթէ այդ ըսածը գաղտնիք է: Եթէ գիտնաս իրեն մտիկ ընելու ձեւը՝ առանց կրկնելու հարցը, իր վստահութիւնը վերջնականօրէն կը շահիս (մինչեւ իր պատանեկութեան տարիք հասնիլը), հետեւաբար, յաջորդ անգամ ան բնականաբար զարձեւալ քեզի պիտի պատմէ իր գաղտնիքները: Սակայն եթէ հակառակը կատարես եւ չյարգես իր գաղտնիքները ծածուկ պահելու ու պահանջքը, վստահաբար ան քեզի որեւէ բան չի պատմեր

յետայսու: Ուշ կամ կանուխ, ծնողք պիտի նկատեն, թէ իրենց երեխան այլ եւս ոչինչ կը պատմէ իրենց: Արդարեւ, եթէ սխալմամբ պատահեցաւ եւ իր անձնական «գաղտնիք»ներէն մին բացի սուրի, ձեւով մը ներողութիւն խնդրէ իրմէ եւ երկրորդ առիթի մը առաջարկը ներկայացուր: Ամէն մարդ սխալական է, բայց ոչ միշտ: «Կը վախնամ ծաղրի առնէք Ձիս»

Կրնայ ըլլալ դուք չնկատէք այդ, սակայն փոքրիկները կեանքը շատ լուրջի կ'առնեն եւ կատակէն չեն հասկնար: Կատակը հասկնալու բաւարար հմտութիւնը շահելու համար, պզտիկները պէտք ունին նուազագոյն աստիճանի հասունութեան: Այն ինչը որ մեծերուն խնդուք կը պատճառէ, պզտիկներուն բնաւ զբաղում չի բերեր: Հետեւաբար, պէտք է ծիծաղիլ եթէ ան սխալի կամ մակերեսային ձեւով մօտենայ խնդրներուն:

Եթէ երեխան նեղանայ այդ ծիծաղներէն, փորձէ իրեն հանգստացնել ըսելով, թէ անոնց նպատակը ծաղրի առնել չէ երբեք, այլ ամենայն պարզութեամբ շատ հաճելի թուած է իր ըսածը կամ կատարածը: Արդարեւ, ժամանակի ընթացքին ան պիտի վարժուի եղելութեան եւ այլեւս պիտի չվախնայ այդ ծիծաղներէն:

## ԲԱԶՄԱՇՆՈՐՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԱՅՈՒՅԻ ՍԸ

Շարունակուած էջ 8-էն

տի բաժինին մէջ:

Շնորհաշատ հայ արուեստագիտուհին այս ամառ, լրիւ մէկ ամիս, իր մասնակցութիւնը պիտի բերէ Փէփըրտայն համալսարանի երգի փառատօնին: Հոն ելոյթներով հանդէս պիտի գան նաեւ հիւր անուանի արուեստագէտներ Մար-

թին Քաթըր, Կրահամ ձօնսընը եւ ուրիշներ:

Նախալի Պիեիւքեանսը բոլոր նախադրեալներն ալ ունի արուեստի գոյգ բնագաւառներուն մէջ նորափայլ աստղ մը դառնալու:

Բարի երթ դեռատի եւ բազմաշնորհ հայրահիւն, յոյսով ենք որ շուտով զինք կը տեսնենք մեծ բարձունքներու վրայ:

# AMERICAN RELIABLE WINDOWS



[www.americanreliablewindows.com](http://www.americanreliablewindows.com)

*Beautify while increasing the value of your home with elegant,*

**18 months no interest\*** Financing O.A.C

**ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.**

Vinyl, Wood, Fiberglass, Glad or Aluminum Replacement, Retro or New Construction

**Our Windows Qualify For Tax Credits**

Manufacturers rebates & deep discounts available NOW.  
Product, Pricing and Financing to meet any Budget.

**888-804-7250**  
*Your Satisfaction is Guaranteed.*



Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

**\$89** Rebate\*  
Rebate Example:  
 5 windows = \$445  
 10 windows = \$890  
 15 windows = \$1335



Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties



### ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՏՕՆԵՑ ԻՐ ՔԱՌՈՐԴ ԴԱՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Մարտնակուած էջ 8-էն

դարձաւ մէկ դպրոց, ազնուացնելու հայ աղջկան՝ վաղուան հայ մօր սիրտը, լուսաւորելու համար անոր միտքը եւ դրսեւորելու անոր ընդերքներուն մէջ անթեղուած բնածին շնորհները:

Ուստի ակնկալելի էր, որ վերջին երեսուն տարիներուն, ԱՄՆի նորահաստատ հայկական գաղութներուն մէջ եւս հիմնուէին վարժարաններ, որոնց երրորդը եւ նորագոյնը քառորդ դար առաջ Կլենտօնի Հայ Քոյրերու վարժարանն էր՝ հիմնադրուած մեծ գոհողութիւններու գնով եւ գործի հանդէպ ունեցած հաւատքի գորութեամբը քոյր Հովհիսիմէ Զիֆթելեանին:

Արդար էր, որ Շաբաթ, Մայիս 14ին, աւելի քան 400 հոգի, մեղմ երաժշտութեամբ հիւրընկալուեցաւ «Արպաղ» սրահին մէջ, համագամանօրէն տօնակատարելու վարժարանի հիմնադրութեան քսանհինգամեակը, դրուատելու եղած բոլոր իրագործումներն ու նուաճումները եւ երախտիքի խօսք ուղղելու բոլոր նուիրեալներուն, ապա շարունակելու նուիրական երթը:

Ճաշկերոյթ-հանդիսութիւնը կը վայելէր հովանաւորութիւնը Անարատ Յղութեան Հայ Քոյրերու միաբանութեան, բարեբեր ներկայութեամբ միաբանութեան ընդհանուր մեծաւոր՝ մայր Եւտոքսիա Քէշիշեանի: Իր ներկայութեամբ հանդիսութիւնը կը պատուէր Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Հայ կաթողիկէ թեմի առաջնորդ Մանուէլ եպօ. Պաթաքեանը, ինչպէս նաեւ յատկապէս այս առթիւ Ֆիլատելֆիայէն ժամանած հիմնադիր քոյր Հովհիսիմէ Զիֆթելեանը: Նաեւ ներկայ էին Կլենտօնի Հայ կաթողիկէ ժողովրդապետութեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու փոխժողովրդապետ Արմենակ վրդ. Պետրոսեանը եւ Միխիթարեան միաբանութեան հայրերէն՝ վարժարանի տնօրէն Դաւիթ Ղազարեանը: Իրենց օրհնաբեր ներկայութիւնը բերած էին վարժարանէս ներս ցարդ ծառայող անձնուրաց քոյրեր՝ տնօրէնուհի քոյր Լուսիա, քոյր Ալիւլինէ Թերզեան, քոյր Գայիանէ Թալալեան եւ քոյր Վարդենի Թերզեանեան, ինչպէս նաեւ յարգարժան բարերարներ, հիւրեր, ուսուցչական կազմ, նախկին ուսուցիչներ, ծնողներ, շրջանաւարտներ եւ շաղկերտներ:

Շնորհակալութեամբ կ'ուզենք չիշել, որ տօնակատարութեան կազմակերպչական աշխատանքները վստահուած էին նոյն նպատակով յառաջացած յանձնախումբի մը, որ կը բաղկանար վարժարանիս ուսուցչուհիներէն, անձնակազմէն, ներկայ եւ շրջանաւարտ ծնողներէ՝ գլխաւորութեամբ տնօրէնուհի քոյր Լուսիային, որ մեծ բժախնդրութեամբ եւ հմտութեամբ կազմակերպեց եւ ծրագրեց ճաշկերոյթի բոլոր մանրամասնութիւնները: Սրահը գեղեցկօրէն զարդարուած էր ծաղկեփունջերով. իւրաքանչիւր հրաւիրեալ ստացաւ յատուկ մարգարտեայ խաչ մը՝ նուիրուած «Չքայնա Փրօր» ընկերութեան սեփականատէր Յարութ Ճապարեանի կողմէ: Երեկոն ունէր գեղարուեստական յայտագիր՝ մասնակցութեամբ շրջանաւարտ եւ ներկայ աշակերտներու եւ Համագաղթինի «Նայիրի» պարի միաւորին՝ դե-

կավարութեամբ Գաթրին Հայրապետեանի:

Յայտագիրը սկսաւ յոտնկայս ունկնդրութեամբ Տէրունական աղօթքին, ապա՝ ամերիկեան, հայկական եւ Լոս Անճելըսի Հայ Քոյրերու վարժարանի քայլերգներուն, կատարողութեամբ վարժարանիս երգչախումբին, դեկավարութեամբ երաժշտութեան ուսուցչուհի Վարդուհի Պաղտասարեանի:

Օրուան հանդիսավարներն էին՝ շրջանաւարտ ծնողք, իրաւաբան Վաչէ Թաշճեան եւ 2002ի շրջանաւարտ ու հոգեբանութեան ուսանողուհի Սեւան Ծէրիքեան, որոնք օրուան առիթը պատշաճ կերպով ողջունելէ ետք, բարի գալուստ մաղթեցին ներկայներուն եւ յատկապէս՝ վարժարանի 25ամեակի ուրախ առիթով այլազան վայրերէ ժամանած հիւրերուն, եւ փոխանցեցին իրենց սրտի խօսքը՝ գոհունակութիւն յայտնելով ի տես այս կրթական օճախի նուաճումներուն:

Առաջին հերթին բեմ հրաւիրուեցաւ մայր Եւտոքսիա Քէշիշեանը, որ անցնող շրջանին, հինգ տարիներ վարած էր վարժարանի տնօրէնութիւնը: Ան համապարփակ կերպով ներկայացուց միաբանութեան պատմականը՝ սկսեալ Պոլիսէն մինչեւ Հայաստան, վեր առնելով անոր ունեցած առանցքային դերակատարութիւնը հայ ժողովուրդի պատմութեան մէջ, շեշտելով հայ քոյրերու առաքելութեան անհրաժեշտութիւնը:

Իր խօսքի աւարտին, ան մաղթեց, որ քոյրերու ծառայական կեանքի օրինակը խթան հանդիսանայ ամէն հայուհիի, եւ ներշնչէ զիրենք՝ նուիրուելու հայ ազգի զաւակներու դաստիարակութեան աշխատանքին:

Տնօրէնուհի քոյր Լուսիա երախտագիտութեամբ ողջունեց ներկայները, որոնք այս նուիրական պահուն շրջապատած էին վարժարանի մեծ ընտանիքը՝ բաժնեկից դառնալով անոր ուրախութեան, ապա մաղթեց, որ վարժարանը կանգուն մնայ եւ որպէս լուսատու փարոս՝ շարունակէ լուսաւորել հայ պատանիին ու երիտասարդին մատուցել միտքը: Ան շնորհակալութիւն յայտնեց նիւթապէս եւ բարոյապէս գորավիզ կանգնող բոլոր հայրերին ներուն, որոնք հաւատք ունին հայ վարժարանի հայակերտման սուրբ գործին նկատմամբ, եւ ըսաւ. «Այսօր, ամէն բանէ աւելի կարիքը ունինք այդ ազնիւ հայրերներու աջակցութեան եւ համագործակցութեան, որպէսզի կեանք ու աւիշ տանք այս սուրբ յարկին՝ Հայ Քոյրերու վարժարանին»:

Յայտագիրը շարունակուեցաւ «Նայիրի» պարախումբի «Շալախօ» պարի գեղեցիկ ու խանդավառ ող ներկայացումով:

Տօնակատարութեան հիւր դասախօսն էր վարժարանիս խորհրդատու մարմինի նախագահուհի, իրաւաբան Նարին Խալաթեան-Պեթրլ: Ան իր խօսքը սկսաւ որպէս վարժարանի հպարտ ծնողք՝ երկու սիրասուն դուստրերու, որոնք վայելած են հայ քոյրերու անսպասելին ու գուրգուրանքը: Ան աւելցուց, որ քոյրերը, իրենց անձնուրաց աշխատանքով եւ կեանքի օրինակով, բոլորին համար դարձած են քրիստոնէական դաստիարակութեան աղբիւր, ու դրուատեց վարժարանի ծառայութիւնները եւ իրա-

### ՅԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՍՕՏ

Մարտնակուած էջ 6-էն

կում 2 շաբաթեայ ծրագրի ամենաթէժ, ամենաանկեղծ եւ ամենայուսադրող հանդիպումն է կայանում: «Հայերը մեծ ցաւ են ապրել: Մենք՝ այստեղ մնացածներս էլ կորցրել ենք: Նրանք գնացին, մենք էլ խաղաղութիւն չկարողացանք գտնել: Այս քաղաքը միաժամանակ քրիստոնեայ քաղաք է: Իր ճարտարապետութեամբ հայկական քաղաք է: Մեր ամենամեծ երազանքներից մէկն է իրականանում: Վերականգնում է հայկական «Սուրբ Կիրակոս» եկեղեցին: Մեր հայ բարեկամները գուցէ մէկ օր կը վերադառնան, մեր դուները մեր համաքաղաքացիների համար մինչեւ վերջ բաց է», -ասում է Բայրէմիլը, ում խօսքերը յոյս են սփռում: Նման հետաքրքրութիւն տեսանք նաեւ Սուրի քաղաքապետարանում եւ Վանում:

գործումները, որոնք արգասիքն են նուիրեալ անձերու հետեւողական եւ անսակարկ աշխատանքին ու նիւթական գորակցութեան:

«Այս բոլորին միաւորումով, մենք այսօր դէմ յանդիման կը գտնուինք արծաթեայ յոբելինականի մը, որ մեզ կը ներշնչէ հպարտութիւն, բայց միաժամանակ մեզ կը դնէ ապագայի նոր յանձնառարութիւններու դիմաց», եզրակացուց ան:

Այս խրախուսիչ ելույթին յաջորդեց 2006ի շրջանաւարտ, համալսարանական ուսանողուհի Փաթիլ Տէրտէրեանի՝ դաշնամուրի վրայ նուագը, ապա բեմ հրաւիրուեցաւ 2000ի շրջանաւարտներէն՝ համալսարանաւարտ Անի Խաչոյեանը, որ իր դպրոցական հին օրերը վերականգնող պատմութեան ուսուցիչներու եւ աշակերտներու հոգիներուն մէջ յուզիչ զգացումներ, երբեմն ալ արցունք եւ յաճախ ժպիտ ու խնդուք յառաջացուց:

Պարախումբին կողմէ հաճելի ներկայացումէ մը ետք, վարժարանիս յարգելի ծնողներէն Փաթիլ Աբոշեան-Գասպարեան ներկայացուց այս առիթով ստացուած վկայագիրներն ու շնորհաւորագիրները՝ հետեւեալներէն. ծերակուտական Տայնե Ֆայնթայն, քոնկրետական Էտըմ Ծիֆ, Քալիֆորնիոյ Ծերակուտի անդամներ Ռոնալտ Քալտերոն եւ Քեւրն սըր Լէոն, Քալիֆորնիոյ խորհրդարանի անդամներ Մայք Ֆիլոլըր եւ Մայք Կաթօ, Լոս Անճելըս գաւառի վերահսկիչ Մայքըլ Անթոնովիչ, Քալիֆորնիոյ փոխհանգապետ Կեւրն Նիւսըմ, Էնսիւնոյի թաղային խորհուրդի անդամ Կրեկորի Մարթայեան եւ Քրեսենթա հովիտի քաղաքային խորհուրդը:

Յիշենք, որ այս առիթով խօսք առին հանդիսութեան ներկայ գտնուող պաշտօնական գրասենեակներու ներկայացուցիչներ, որոնցմէ Կրիկորի Մարթայեան, խանդավառուած հայ քոյրերուն կատարած աշխատանքին՝ յայտարարեց ուսումնական «Մարթայեան հիմնադրամ»-ին ստեղծումը:

Տեղի ունեցաւ մոմավառութիւն, որուն համար բեմ հրաւիրուեցան մայր Եւտոքսիա Քէշիշեան, առաջնորդ Պաթաքեան, ներկայ բոլոր քոյրերը, նուիրատու ծնողներ, երկար տարիներու անխոնջ ծառայած նախկին եւ ներկայ ուսուցչուհիներ, անձնակազմի անդամներ, շրջանաւարտներ, վար-

Մեր խմբի մասնակիցներից Նունէ Սարգսեանի ընտանիքը 1915-ին Վանից երեւան է փախել: Աւտոբուսի մէջ եւ Նունէի դիմացն էի նստած: Թաթուան մտնելուց յետոյ Նունէն սկսում է ներքուստ արտասուել, որը ժամեր տեւեց: Հին վանում, որտեղ պեղումներ են ընթանում, Նունէն երկար ժամանակով անհետացաւ: Նա ոտք էր դրել այն հողին, որտեղ իր ընտանիքն է ապրել: Պեղող տարածքների դիմաց հայկական հին դպրոցի շէնք է, որի վրայ գրուած է. «վաճառու է»: Նունէի անհանգստութիւնը մեծանում է: Լաւ է, որ մէկ օր առաջ Աղթամարի եկեղեցին էինք տեսել: Այն մի սիրովանք էր: Սակայն շատ գործ կայ անելու: Այս տարածաշրջանում մնալուն խաղաղութիւն հաստատելու համար անհրաժեշտութիւն կայ շատ պատմական արժէքներ վերականգնել:

ժարանիս ծնողական մարմիններու ատենապետուհիներ եւ աշակերտական խորհուրդի նախագահը, որոնք յատուկ արարողութեամբ մը վառելիք ետք 25 ամեակի մոմերը՝ հատեցին տարեդարձի կարկանդակը, ուրախութիւնը հասցնելով գագաթնակէտին:

Օրհնութեան խօսք արտասանեց առաջնորդ Պաթաքեան: Ան նախ կատարեց օրհնութիւնը ներկայներուն տրամադրելի գեղեցիկ մարգարտեայ խաչերուն, ապա մեծ դրուատիքով խօսեցաւ միաբանութեան անձնուէր քոյրերուն մասին՝ գանձեց անուանելով «Կրկնակի մայրեր», որոնք իրենց կեանքը նուիրած են ազգային ազնուագոյն ծառայութեան՝ նախ հայ աղջկաներու դաստիարակութեան նուիրական գործին՝ պատաստելով ապագայ մայրերը, ապա այդ դաստիարակութեան ծիրէն ներս ներգրաւելով նաեւ տղաքը՝ որպէս ապագայ հայրեր: Ան մաղթեց վարժարանին եւ գայն կանգուն պահող բոլոր նուիրեալներուն յաջողութիւն եւ յառաջդիմութիւն:

Շնորհակալութեամբ կ'ուզենք նշել, որ յայտագիրի ընթացքին ցուցադրուեցաւ վարժարանիս 25ամեայ կեանքն ու գործունէութիւնը ներկայացնող տեսաերիզ մը, որ պատրաստուած էր շրջանաւարտ ծնողք Սանտրա Խաչատուրեանի կողմէ, իսկ ձայնային եւ երաժշտական պատասխանատուութիւնը սիրալոյս տալու ձեռքով էր 2003ի շրջանաւարտ Շահան Գազանճեանը:

Հանդիսութեան պաշտօնական յայտագիրը աւարտելէ ետք, երեկոն շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր՝ բեմահարթակ բերելով բոլոր ներկայները, մասնաւորաբար ուսանողութիւնը, որոնք այդ երեկոյի զարդերն էին ու մեր բոլորիս ապագայ յոյսը:

Հայ քոյրերու վարժարանի արծաթեայ յոբելինական հանդիսութիւնը կը նշանակէ միայն շրջանի մը աւարտը...

Հայ Քոյրերու վարժարանի քսանհինգամեակը տօնակատարել կը նշանակէ՝ նոր սկիզբ, նոր յանձնառարութիւններ, նոր մարտահրաւէրներ...

Շնորհաւոր քսանհինգամեայ Հայ Քոյրերու վարժարանի ընտանիք...

Բարի երթ եւ կանաչ ճանապարհ դէպի նոր «Արշալոյսներ»...

### ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՕՅԱՃԵԱՆ (ՄՈՒՐԱՏ)

Շարունակուած էջ 13-էն

աշխարհ գարմացուց:

Թշնամին հակառակ իր մեծ թիւին եւ թնդանօթներուն՝ կը ստիպուի մէկ քանի անգամ նահանջել, գետնին վրայ հազարաւոր դիակներ ձգելով: Վերջ տալու համար այս յաղթական դիմադրութեան, թուրք հրամանատարը կը դիմէ զգրեթէ խորամանկութեան մը: Կը պարզէ սպիտակ դրօշակ եւ բանակցութիւն կը խնդրէ հաշտութեան գալու համար:

Մուրատ եւ Գրգօն միմեկի դէմ կ'արտայայտուին բանակցելու որոշումը տուող ժողովի մը մէջ:

Դժբախտաբար ռազմամթերքի եւ պաշարի սպառումը կ'արգիլէ որ Մուրատին խօսքերը մտիկ ընեն:

Պարապ ստամոքսները չեն զգար լարուած թակարդը:

Ու դաւաճան թուրքը համազարկով կ'ընդունին այն 160 հայ կտորիճները որոնք իրենց դիրքերէն իջնելով բանակցելու կ'երթային:

Անհաւասար պատերազմը կը վերսկսի: Հոմերական այս կռիւններուն մեծ ու փոքր զիրար կը գերազանցէին իրենց քաջագործութիւններով:

Պարտուած հայ կիները անձնատուր չեն ըլլար:

Շաքէները անդունդները կը լեցնեն իրենց մանուկներով ժայռերու կատարներէն ինքզինքնին գահավիժելով: Կիսամեռ հայ կոյսերու, մայրերու եւ մանուկներու դիակները բուրգեր կը ձեւացնեն:

Այս ամէնը տեսաւ Մուրատ եւ անհունօրէն տրտմեցաւ:

Յեղափոխական գործիչին համար անցեալի վրայ ամիսսալը ժամավաճառ ըլլալ է: Պէտք էր դարձեալ գործել: Ու ջանաց ցրուած ուժերը հաւաքել եւ գերագոյն ճիւղը թափել: Ամէն աշխատանք սպարդիւն էր սակայն: Թշնամին չորս կողմը տիրապետած եւ աւերակի վերածած էր: Ապստամբութիւնը արեան մէջ խեղդուած էր ու պոռնիկ Եւրոպան լուծ:

Կառավարութիւնը դէպքին կազմակերպիչը կը փնտռէր փութկոտ: Թուրք զինուորներ կը յաջողէին վերջապէս գտնել Մուրատին եւ իր ընկերներուն պահուած քարայրը: Քանի մը օր դիմադրելէ վերջ վառօղն ու հացը կը հատնին ու թշնամին ալ ծուխով կը լեցնէ քարայրը, որպէսզի չնչելու օղն եւս պակսի, հայ քաջերը ստիպուած դուրս կու գան եւ թուրքերուն ձեռքը գերի կ'իյնան:

Վերջապէս Մուրատը՝ Համիտի այդ պատահաւոր՝ ձերբակալուած էր:

Այս կը պատահէր 1894-ի Օգոստոսի վերջերը:

...

Տեղական բանտերը քաջ տալէ եւ դժոխային չարչարանքներու ենթարկուելէ յետոյ, Մուրատ կը տարուի Պոլիս, ուր դատապարտուելով ցմահ բերդարգելութեան՝ կը դրկուի իր պատժավայրը՝ Ափրիկեան Տրիպոլիս:

Ամբողջ տասնեւմէկ տարի կը կենայ իր աքսորավայրը:

Կեդրոնի իր նախկին ընկերներուն եւ քրոջ Հայկանուշի կողմէ կարգ մը փախուստի փորձեր անյաջողութեան կը մատնուին:

Կը պատմեն նոյնիսկ որ ինքը Մուրատ չէ ուզած փախչիլ, վասն զի կուսակալին պատուոյ խօսք տուած ու չէր ուզեր խօսքը դրժել:

1905-ին Հնչակեան Կեդրոնը կը յաջողի վերջապէս դուրս քաշել գինքը բանտէն: Այն ատեն Պոյաճեան 45 տարեկան էր. յեղափոխական ոգին ի սպառ մեռած չէր իր մէջ: Իր բոլոր էութեամբ ան կը մնար իր երիտասարդական գաղափարներուն հետեւող:

Մուրատ իր ազատութիւնը ստանալէն յետոյ եկաւ Փարիզ, Հնչակեան Կեդրոնը, ուր «ՀՆՉԱԿ»-ի մէջ հրատարակեց կոչ մը ի նպաստ համերաշխութեան:

Յետոյ անցաւ Ամերիկա համերաշխութիւնը իրական հողի վրայ դնելու համար:

Ամերիկահայ գաղութին մէջ իր գտած ընդունելութիւնը փառաւոր յաղթութիւն մըն էր: Բոլոր հայ թերթերն ու հայ կուսակցութիւնները փառաբանեցին Մասուրի հերոսը: Ամերիկեան մամուլն անգամ գնահատական խօսքեր շուայրեց անոր հասցէին:

Մահամանդրութեան հռչակումէն վերջ իր հայրենակիցները գինքը իսկոյն երեսփոխան ընտրեցին Օսմանեան փարլամենթին եւ նաեւ Ազգ. Երեսփոխանական ժողովին: Իր բոլոր պաշտօնակիցները գինքը կը սիրէին ու կը յարգէին, այնպէս որ երկու առիթով Քաղաքական ժողովին անդամ ընտրուեցաւ:

...

Երիտասարդ Թուրքիան Համիտի հայ հերոսին հանդէպ ունեցած ոխը իւրացնելով, մահուան դատապարտեց Մուրատը: Թալէաթին քն իսկ հարցաքննելով գինքը Պոլիս, ոչ մէկ յանցանք չգտնելով ազատ թողած էր, երբ միւս քսան Հնչակեան բանտարկեալները կախաղանի կը դատապարտուէին Յուսիսի կէսին, պետական դաւադրութեան ամբաստանութեամբ՝ Մուրատ աւելի քան կասկածելի էր իթթիհատականներուն համար, անոր անցեալը մղձաւանջ մըն էր իրենց համար:

Հայութեան այդ անձնուէր գաւակը չէր դադրած բողոքել իրենց գազրելի ուժի միջին դէմ եւ ի նշան բողոքի չէր մասնակցած 1912-ի փարլամենթական ընտրութիւններուն: Երբ Կեսարիա կ'աքսորուի, հոս գրեթէ առանց քննութեան կախաղանի կը դատապարտուի իրեն անցեալի «յանցանքը» քաւելու համար: Համիտի գահակալութիւնը կը պակսէր այս չարագուշակ պատկերը լրացնելու համար: Բայց ժէժօն թուրքերը՝ Թալէաթներն ու ինքնակները Համիտն ալ գերազանցեցին:

Այսօր, երբ մենք մեր յարգանքի բաժինը կը բերենք հայ հերոսին, ոչ թէ իբր կուսակցականի, այլ որպէս անձնուէրանց մարդ, մենք անոր յիշատակին կը միացնենք բոլոր գաղափարի գոհերուն յիշատակը, յիշատակը Պոլսոյ Քսան կախուածներուն, ինչպէս նաեւ Զօհրայի ու Վարդգէսի, Աւուրի ու Իշխանի եւ վերջապէս յիշատակը այն հարիւր հազար ազգայիններուն, որոնք ինկան տառապանքի Գողգոթայի ճամբուն վրայ:

Մինչեւ գետին կը խոնարհինք անոնց աճիւններուն առջեւ:

Անսահման են մեր կորուստները, բայց «մեր հրճուանքը կը ծիծաղի մահուան վրայ, ճանապարհը դիակներով եզերուած է, բայց ան կը տանի դէպի ազատութիւն (\*):»:

(\* ժողովի խօսքերը Փրէսանսէի մահուան առիթով:

### ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԸ ԿԸ ՄԵԾԱՐԷ ԶԱՐԸ ԱԶՆԱՒՈՒՐԸ

Շարունակուած էջ 7-էն

դաքացիներուն:

Հայաստանի երրորդ ընդարձակ քաղաքի՝ Վանաձորի տարեց քաղաքացիներու համար «Ազնաւուր Հայաստանի Համար» կազմակերպութիւնը հաստատեց Տարեցներու Տունը: Տասնամեակ մը առաջ, Ազնաւուրի համաձայնութեամբ, Հայ Օգնութեան Ֆոնտին փոխանցուեցաւ այս Տունը՝ որուն մեծապէս օգտակար հանդիսացաւ Գէորգ եւ Սիրվարդ Քարամանուկ Հիմնդրամը: Այժմ, 55 տարեցներ կ'ապրին եւ կը հոգատարուին Վանաձորի Տարեցներու Տան մէջ, որ 30 պաշտօնեայ ունի:

Իր մարդասիրական գործունէութենէն անկախ, Չարլզ Ազնաւուր դիւանագիտական ասպարէզին մէջ եւս պաշտօն վարած է. ան Հայաստանի հանրապետութեան Դեսպանն է Զուիցերիոյ մէջ եւ Հայաստանի մնացուն պատգամաւորը ժընեւի Միացեալ Ազգերու կազմակերպութեան: Ան նաեւ պատգամաւորն է Յեղասպանութեան ճանաչման Ֆրանսայի մէջ:

Յայտագիրի այս պահուն ներկայացուեցաւ յատկապէս պատրաստուած վաւերագրական շարժանկար մը Չարլզ Ազնաւուրի իրագործումներուն մասին:

Հանրածանօթ երգչուհի Լայզա Մինէլլի, որ աշակերտն ու երկար տարիներու բարեկամը եղած է Ազնաւուրին, ինչպէս նաեւ ատենապետուհի օրուան Պատուոյ Յանձնախումբին, ըսաւ որ պաշտամունք ունէր Ազնաւուրի երաժշտական կատարողական ոճին հանդէպ, որուն շնորհիւ ծնունդ առած էր աշակերտուսուցիչ յարաբերութիւնը: Ան յիշեց Ազնաւուրի Հայ ըլլալու հպարտութիւնը եւ նախաձեռնութիւնը օգնելու իր հայրենիքին՝ երբ 1988 թուականին երկրաշարժը ցնցեց երկիրը: Ապա, իր ուսուցիչը բեմ հրաւիրեց՝ որպէսզի Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի ձեռամբ ստանայ Հայ Օգնութեան Ֆոնտի պատուոյ մրցանակը:

Լայզա Մինէլլիի խօսքէն ետք՝ բոլոր ներկաները ոտքի կանգնեցան եւ ծափողջիւններով դիմաւորեցին օրուան մեծարեալը, որ բեմ բարձացաւ եւ իր գնահատանքը յայտնեց մեծարանքի այս արտայայտութեան համար:

«Յուզիչ է պատուուիլ քու անձնական ժողովուրդիդ կողմէ: Շնորհակալ եմ որ զիս կը պատուէք եւ շնորհակալ եմ մեր հայրենիքին համար», ըսաւ Ազնաւուր:

Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարար Եդուարդ Նալպանտեան իր սրտի խօսքը արտասանեց այն անձին մասին, զոր ճանցած եւ որուն հիացած էր երբ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանն էր Ֆրանսայի:

«Դուն հարիւր առ հարիւր Ֆրանսացի ես, եւ հարիւր առ հարիւր Հայ, ինչպէս նաեւ հարիւր առ հարիւր աշխարհաքաղաքացի: Դուն սիրոյ սերմերը ցանցիք ժողովուրդներու հոգիներուն մէջ, ինչպէս նաեւ մեր հոգիներուն մէջ», ըսաւ Նախարար Նալպանտեանը, որ արտայայտուեցաւ նաեւ Հայաստանի հետ Ազնաւուրի հաստատած զօրաւոր կապերուն կապակցութեամբ: Խօսելով իր անձնական զգացումներուն մասին՝ ըսաւ որ Ազնաւուրի երաժշտութիւնը, ինչպէս նաեւ անոր նուիրումը Հայկական ժառանգութեան՝ իրեն համար ներշնչման աղբիւր կը հանդիսանան:

Մեծարեալին աղջիկ գաւակը՝ տաղանդաւոր երգիչ Սեդա Ազնաւուր ի պատիւ իր հօրը երգեց «Ոչ մի Մարիլի»:

Այս ձեռնարկը նուիրուած ըլլալով Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակին, նուիրուած էր նաեւ անցնող երկու տասնամեակներու ընթացքին, իր հիմնադրութեան թուականէն սկսեալ, Հայ Օգնութեան Ֆոնտի մարդասիրական աշխատանքներուն եւ իրագործած ծրագիրներուն:

Հայ Օգնութեան Ֆոնտը հիմնուեցաւ եւ անոր մարդասիրական գործունէութիւնը զարգացաւ շնորհիւ հիմնադիր եւ ատենապետ ողբացեալ Գէորգ Յովնանեանի առաջնորդութեան: Ֆոնտի գլխաւոր ծրագիրն էր բժշկական եւ մարդասիրական օգնութիւն փութացնել երկրաշարժի ենթարկուած շրջաններուն: Երբ Հայաստանը վերստին ստացաւ իր ազատութիւնն ու անկախութիւնը՝ Տիար Յովնանեանի նախաձեռնութեան Հայ Օգնութեան Ֆոնտը իր գործունէութեան դաշտը ընդարձակեց՝ ծրագիրներ մշակելով բնակարաններու կառուցման, կերակուրի եւ ընկերային յայտագիրներու եւ տնտեսական զարգացման ի նպաստ:

Հաստատման օրէն ի վեր Հայ Օգնութեան Ֆոնտը՝ որպէս ամենէն օգտակար հանդիսացող, յարգուած եւ պատուուած կազմակերպութիւններէն մէկը՝ աւելի քան 285 միլիոն տոլար յատկացուցած է Հայաստանի օգնութեան:

Օրուան փակման խօսքը ըրաւ Հայց. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ եւ Հայ Օգնութեան Ֆոնտի նախագահ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան: Ան ըսաւ որ Չարլզ Ազնաւուրը իր ուժը ստացած է իր Հայկական արմատներէն: Ան յիշեց որ Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնք հռչակման 1700-ամեակին առիթով երբ Ազնաւուրը «Աւէ Մարիա» երգեց Միծեռնակաբերդի Մեծ Եղեռնի Յուշահամալիրին մէջ՝ բոլոր ներկաները, նոյնիսկ Յովնանեան Պօղոս Բ. Պապը՝ որ այդ օրերուն Հայաստան կ'այցելէր, յուզուեցան եւ անոնց աչքերը արցունքներով լեցուեցան: «Չարլզ Ազնաւուր միջազգայնօրէն սիրուած եւ յարգուած դէմք մըն է, եւ մեծ օրինակ կը հանդիսանայ մեզի բոլորիս համար: Սիրելի Չարլզ, քու ներկայութիւնդ մեր մէջ նուէր մըն է ամբողջ աշխարհին, եւ մանաւանդ նուէր մը քու հայրենակիցներուդ», ըսաւ Առաջնորդ Սրբազան Հայրը:

Լայզա Մինէլլի կը գլխաւորէր օրուան Պատուոյ Յանձնախումբը, որուն կ'անդամակցէին Թոնի Պէնէթ, Սէլին Տիոն, Փլասիտո Տամինկո, Ադոմ Էկոյեան, Արսինէ Խանճեան, Էլիթըն Ճան, Տէյվիս Չըրչիլ, Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարար Եդուարդ Նալպանտեան, Միացեալ Նահանգաց Հայաստանի լիազօր եւ արտակարգ Դեսպան Թաթուլ Մարգարեան, Միացեալ Ազգերու կազմակերպութեան մօտ Հայաստանի լիազօր եւ մնացուն Դեսպան Կարէն Նազարեան, Միացեալ Նահանգաց նախկին Դեսպան Էտուարտ Ճէրէճեան, ինչպէս նաեւ Յոյն Ուղղափառ, Հռոմէական եւ Եպիսկոպոսական Եկեղեցիներու Առաջնորդներ, Սէնաթըններ, Գոնգրէմէններ եւ մեծ թիւով քաղաքական դէմքեր ու դիւանագէտներ:

### ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅ

Շաբաթական 14-էն

րան Արքան հրաժարուել էր Ասորի-քի, Կիլիկիայի, Փոնտիկի, Սելեուկիայի արտաքին նուաճումներից, սակայն ոչ երբեք Պարթևաստանի նուաճումներից: Ծովքն ու Կորսուքը յանձնուել էին կրտսեր Տիգրանին թագաւորելու: Տիգրան կրտսերը մտադրուել էր հօր մահից յետոյ տիրելու հայոց գահին: Սակայն, Պոմպէոս զօրավարի դէմ ընդվզելու մեղադրանքով, ձերբակալուել էր, տարուել Հռովմ, շղթայակապ քայլել նրա փողոցներով: Տիգրան Արքան նորէն Մեծ Հայքին էր միաւորել Ծովքն ու Կորսուքը:

Տիգրան Արքան, հաշտութեան պայմանագրի ստորագրումից յետոյ էլ, Հռովմը համարել էր Հայաստանի գլխաւոր թշնամի: Ռազմական ու քաղաքական իմաստուն արմէն արքան, ձեռնարկել էր հակառակորդ Պարթևաստանի հետ մերձենալու քաղաքականութիւն վարել, Հռովմի դէմ ռազմաքաղաքական համագործակցութեան պայմանագիր կնքել: Այս խելամիտ ռազմավարութեան շնորհիւ, Տիգրան Արքան խափանել էր Հայաստանը նուաճելու Հռովմի ու Պարթևաստանի ծրագիրը:

Տիգրան Արքայի բանակը դեռ հօր էր, հօր: Արքան կարող էր իր արքայական փառքի համար նոր պատերազմներ մղել, դեռ ոչ վաղ անցեալում էր պարտութեան մատնել ե՛ւ Հռովմին ե՛ւ Պարթևաստանին: Սակայն այն կարող էր խարխուլել հայոց աշխարհի Հայքերի անվտանգութիւնը: Արքայի գահակալութեան վերջին տանամեակի նպատակն էր եղել պահպանել Հայաստանի տարածքային միասնութեան ու նրա թագաւորական գահի անասանութիւնը:

Անկրկնելի իմաստուն արքայ հայոց լեռնաշխարհի, փառահեղ «Հայրենապաշտ Տիգրան Արքայ Հայոց»:

Արդեօ՞ք իրենց աստուածների ճամբած աստղի տիեզերական լո՞յսն էր քաջութիւն ու միասնութիւն հոսել նրա սրտին, թէ՞, իր նախնի աշխարհակալ արքաների ծիներն էին հոսել իր «հուլիան» անդաստաններ: Ինչո՞ւ նրան յաջողած թագաւորները, արքայական յաջորդ գահատոհմերի թագաւորները հայրենապաշտ չեղան:

Երկու հազար տարիներ յետոյ էլ, նրա սիրանքների լոյսը որպէս ջահ դեռ վառուում է արմէնների սրտերում: Տիգրան Արքայի իմաստութեան, քաջութեան ճախրանքի, արեւելքի հօրազոյն արքայի ռազմական խոյանքը հասել էր հեռու աշխարհներ: Նրանց որդիները քան չորս մարտահունչ համանուագներով պիտի փառաբանէին նրա յաղթանակների սիրանքները: Հայոց լեռնաշխարհի «Անգլեր» էր կրկիր հասած մի «Բրիտոն» շառաւիղ, 2009 թուականին, Աւստրալիայի մի լրագրում, իրենց նախնիների բնօրրանի Տիգրան Արքային պիտի բնութագրէր որպէս պատերազմի «Համարձակ եւ մարտավար կախարհը»: «Տիգրանն իր ժողովրդին ապրելու իրաւունք ապահովեց յաւերժութեան համար» պիտի գրէր Ֆրանսայի ականաւոր արեւելագէտ՝ Ռենէ Կրուսէն:

Իմաստուն Տիգրան Արքայ, հայոց գէնքի ծառքի արեւալոյս շողերը տարաւ ծովերից ծով, դէպի հայոց մի նոր աշխարհակալութիւն: Ազգերին, ցեղերին, իրենց շէները ինքնուրոյն կառավարելու իրաւունք շնորհեց: Իր ու գալիք

դարաշրջանների համար անսովոր տիրակալութեան սկզբունքներով, դաշնային աշխարհակալութիւն: Ինչքան էր իմաստուն նրա ներքին ու արտաքին քաղաքականութիւնը: Իր նուաճած անչափ տարածքներում քաղաքակրթութեան արժէքների սերմեր ցանեց:

Աշխարհակալ Տիգրանը նուաճող էր, սակայն ոչ բռնապետ, ոչ կողոպտիչ, քանդող ու կեղեքող, ինչպէս Հռովմն էր: Նուաճած երկրներում նոր արարումներ էր իրակաւնացրել, առեւտրի նոր ուղիներ, ազատ առեւտուր նրանց միջեւ: Բարգաւաճել էր տնտեսութիւնը նրանց, բարեխաւել կեանքի պայմանները: Բնութիւնը, տիեզերքը աստուածացրած՝ նրանց արարմանը պաշտամունք նուիրած Արմէն-Հայքը՝ «Վեհագոյնը Հիւսիսային ժողովուրդներ» պիտի յորջորջուէին:

Ասում են, պատմութիւնը կրկնում է իրեն, պէտք է ջանալ սովորել նրանից: Ազգի ու աշխարհի պատմութեան տարբեր հանգրուաններում, նոյնանման իրադրութիւնների դրուագներ են կրկնում: Խելամիտ լինել, կարողանալ գնահատել նրանց դրական ու բացասական ազդեցութիւնների հետեւանքները նոր ժամանակների պայմաններում: Հետամուտ լինել, ըստ պատշաճի, կիրառել այն: Տիգրան Արքայ, վսեմագոյնը հայոց ռազմական ու քաղաքական հանճարի, այդ բարդ իրադրութեան պայմաններում էլ, հայերին ժառանգ թողեց իր նախնի Միտանիի, Արատտայի, Հայասայի, Նայիրի, Արմինայի թագաւորների սոհմական խոշոր երկիր՝ Մեծ ու Փոքր Հայքեր: Նրա յետնորդները նրանից պիտի թողնէին միայն մի փոքրիկ փշուր:

Այդ ինչպէս եղաւ, որ հայոց յաջորդ արքաները չկարողացան հայոց աշխարհում ստեղծել անսահմանափակ ներքին իշխանութիւն, որ երկիրը կառավարուէր կեղծոնից, բոլորը ենթակալ նրա գահին: Հայոց յետագայ թագաւորական տոհմերից երեւի միայն առասպելական Արշակ Բ. նրա որդի Պապ ծրագրել էին կեղծոնամէտ միապետութիւն ստեղծել: Դաւեցին նրան հայոց իշխանները, նախարարական տները, Արշակունի լինելու համար, թէ՞ նրա կառավարման իմաստութիւնն էր թերի, թէ՞ հատուածական շահերն էին բախում: Հայոց աստուածների սպիտակ գահից այն կողմը, իր անունով Արշակաւան քաղաք էր հիմնադրել: Այնտեղ էր հրաւիրել բնակելու նախարարների դէմ ընդվզողներին, անօրէններին: Նրանք չէին հանդուրժեց, քանզի էին Արշակի քաղաքը: Առասպելական, հեքիաթային Տիգրան Արքայից Արքայի յիշողութիւնը մարե՞լ էր արդեօք, հապա այդպէ՞ս են կառավարում երկիրը:

Դաւեցին հայոց աշխարհին, իրենց իսկ սրբազան լեռնաշխարհից գնացած, իրենց իսկ քաղաքակրթութիւնը տարած երկրները: Եւ դեռ ինչ դաւեր են նիւթելու... Աստուած գիտի, թէ ով գիտի, մենք պէտք է գիտենանք: Եւ երեւի երբեք չգիտեցան: Չուզեցին մեզ, փշուր փշուր արին, քանզի մեր իմաստութեամբ, մեր արարչութեամբ միշտ էլ գերազանցել էին տիրողներին: Հեռու անապատներից վազկատուն ցեղեր հասան այդ սրբազան լեռնաշխարհ, մարեցին լոյսը տիեզերական «Աստուած» ի արարած Եդեմի, այրեցին շէներ, այրեցին հող, այրեցին տաճարներ, մարեցին լոյս, հատեցին նրան պաշտած ծառերը, սպանեցին

### ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐՈՎ ՄՏԱՅՈՂ

Շաբաթական 15-էն

քի փրկութիւն որոնել՝ յանուն դրա լուռութունը ենթարկուել մի ժամանակ իր կողմից ծաղրուած բժիշկների յանձնարարութիւններին:

Ժողովուրդը, Պարոնեանի կորուստը կանխագալով, տագնապել է նրա կեանքի համար: «Իր հիւանդութեան ժամանակ, յիշել է Աճառեանը, ընդհանուր ազգային հանգանակութիւն տեղի ունեցաւ: Իրեն հետ միաժամանակ հիւանդացել էր նշանաւոր դերասան Պետրոս Աղամեանը: Երկու միջնակարգ դպրոց, մին մեր կեղծոնական վարժարանը եւ միւսը՝ Սկիւտարի Պէրպէրեան վարժարանը, մրցման մէջ էինք մտել: Օրապահիկից կտրելով, բոլոր աշակերտները կոպեկներ էին հաւաքում եւ շաբաթական մի անգամ հաւաքուած գումարը յանձնում...»: «Ես չէի մասնակցում Աղամեանի հանգանակութեանը, ասելով, թէ հարուստների գուարճութեան համար խաղացել է, թող հարուստներն էլ օգնեն: Սակայն Պարոնեանի համար...», օրապահիկից գրկելով ինձ, ինչպէս կոպեկներս տալիս էի հանգանակութեանը»:

Պարոնեանն իր մտերիմ ընկերոջը՝ Սուրէնեանին յայտնել է, թէ ցանկութիւն ունի գրական աշխատանքով 200 ոսկի ձեռք բերել եւ աշխարհը շրջել, տարբեր երկրների հորիզոնների տակ լինել, որպէսզի մարդկային հոգու յատկութիւնների մասին իր տեսակէտները ստուգի ու այդ թեմայով ծաւալուն հոգեբանական վէպ գրի: Նա «մարդը նկարել կ'ուզէր թերի, ապականեալ կողմերէն, իբր աշխարհիկ եւ իբր կրօնաւոր», յիշել է Սուրէնեանը: Ծրագր

րել էր այնպիսի խնդիրներ արծարծել, որ համաշխարհային գրականութեան մէջ դեռեւս ոչ ոք չէր համարձակուել: «Թեոփրաստի, Լապրյուերի, Մոլիերի ըսածն աւելին մտադրած լինելը» յայտնելով՝ նա հաւաստել է, թէ բացառապէս է մարդկային հոգու ապականութեան հնարաւոր ամենաբարձր աստիճանը: Իր ցուցադրելիքի համեմատ Մաքիաւելին «մարդկային հոգու ստորութեան մէկ անկիւնը միայն ի տես հանած էր», նոյնիսկ, Մոլիերի «Տարտիւնը» նրա հետ չէր համեմատուել... Գրողը ցատկ նկատել է նաեւ, որ վերոյիշեալ երկի «մտքի տիպարները» պէտք էր հեռուներում փնտռել...

Պարոնեանի ստեղծագործական ուղու «Խիկարի» փուլը վերընթացի բարձրակէտն է, երբ կատարելութեան բարձր աստիճանի է հասել գրողի ստեղծագործութիւնը: Սակայն այն գրողի հնարաւորութիւնների վերին սահմանը չէր: Նա, կեանքի կանոնաւոր ընթացքի դէպքում, անտարակոյս, շարունակելու էր գնալ հեռուում նշարուող անախընթաց բարձունքներին ընդառաջ: Ցաւօք, ծանր հիւանդութիւնը թոյլ չի տուել. չորս ամիս անկողնում տանջուելուց յետոյ, Կ. Պոլսի Ազգային հիւանդանոցում՝ «Իր յոյսերի մէջ» «խեղդուել է» 1891 թուականի Մայիսի 27-ին:

«Թէեւ Պարոնեան մեռաւ, բայց իւր գործեր անմահ կը մնան», թագման շքեղ արարողութեան ժամանակ առաջինը խօսք վերցնելով՝ ազդարարել է արքեպիսկոպոս, բանաստեղծ Խորէն Գալֆայեանը՝ գրողի ծաղրին բազմիցս արժանացած ազգային ջոջերից մէկը:

իրենց, տարան իրենց...: Եւ շատ յետոյ, մի իմաստուն հայ, պիտի գոչէր. «Դուք փրկեցէք մեզ հայոց հին աստուածները»: Նրանց ապանել էին, ո՞վ պիտի փրկէր իրենց: Փշուրներն այդ... իրենց լեռնաշխարհին տեղացած տիեզերական ոգու հուրը, «Կենաց Ծառ» Հայքերի

լեռներից պայթած կրակի լոյսը իրենց արմէնական ցեղի սրտերին գնացին աշխարհներ: Որտեղ որ երկու հայեր հանդիպեցին, որպէս «Նոր Հայաստան» դպրոց հիմնեցին: Եւ, իրենց ցեղի արարման իմաստութեան լոյսը բուռ, բուռ բաշխեցին մարդկանց:

**ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ**  
Մի ոմն գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը \$100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

**Չեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս»**  
**Շաբաթաթերթին**  
**T: (626) 797-7680**  
**F: (626) 797-6863**  
**massis2@earthlink.net**

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկապ գտնուի նուիրել Կայծերիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

**REQUEST FOR PROPOSALS (RFP# 7551)**  
**DISPOSITION PROJECT BASED VOUCHER (“PBV”) PROGRAM**  
The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified developers, including HACLA’s subsidiary, for the Project-Based Voucher (PBV) Program. Through this RFP, the Authority will make available up to a maximum of 455 PBVs for projects which directly assign them to existing housing developments principally to serve low-income elderly and/or disabled occupants. Copies of the RFP may be obtained beginning May 23, 2011 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., June 24, 2011.  
6/2, 6/9/11  
CNS-2105555#  
MASSIS WEEKLY

# Everyday Low Prices!



### 3 LOCATIONS TO SERVE YOU

#### GLENDALE

825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202  
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM

#### PASADENA

1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104  
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM

#### SHERMAN OAKS

13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401  
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM

*Southern California's Premier Wine & Spirits Superstore*

 <p><b>GREY GOOSE</b> VODKA ALL FLAVORS</p> <p><b>\$21<sup>99</sup></b></p>	 <p><b>ARARAT</b> 3 YR ARMENIAN BRANDY</p> <p><b>\$12<sup>99</sup></b></p>	 <p><b>BELUGA</b> NOBLE RUSSIAN VODKA</p> <p><b>\$22<sup>99</sup></b></p>	 <p>Dewar's "White Label" 1.75L</p> <p><b>\$24<sup>99</sup></b></p>
 <p>roberto cavalli VODKA 1.75L</p> <p><b>\$49<sup>99</sup></b></p>	 <p><b>CÎROC</b> VODKA ALL FLAVORS</p> <p><b>\$17<sup>99</sup></b></p>	 <p><b>BACARDI</b> LIGHT OR GOLD</p> <p><b>\$8<sup>99</sup></b></p>	 <p><b>PUTINKA</b> LIMITED EDITION</p> <p><b>\$22<sup>99</sup></b></p>
 <p><b>JOHNNIE WALKER</b> BLUE LABEL</p> <p><b>\$119<sup>99</sup></b></p>	 <p><b>CHIVAS REGAL</b> 12 BLENDED SCOTCH WHISKY</p> <p><b>\$15<sup>99</sup></b></p>	 <p><b>SKYY</b> VODKA ALL FLAVORS</p> <p><b>\$8<sup>99</sup></b></p>	 <p><b>STOLICHNAYA</b> RUSSIAN VODKA 1.75L</p> <p><b>\$18<sup>99</sup></b></p>
 <p>TEQUILA <b>CAZADORES</b> BLANCO OR REPOSADO</p> <p><b>\$19<sup>99</sup></b></p>	 <p><b>Ketel One</b> VODKA</p> <p><b>\$16<sup>99</sup></b></p>	 <p><b>Hennessy</b> COGNAC VS</p> <p><b>\$19<sup>99</sup></b></p>	 <p>TEQUILA <b>Don Julio</b> 1942</p> <p><b>\$79<sup>99</sup></b></p>
 <p>Tsar Alexander I VSOP COGNAC</p> <p><b>\$19<sup>99</sup></b></p>	 <p>TEQUILA <b>PATRÓN</b> SILVER</p> <p><b>\$31<sup>99</sup></b></p>	 <p><i>El Masaya</i> ARAK</p> <p><b>\$20<sup>99</sup></b></p>	 <p><b>NOY</b> 7 YR ARMENIAN BRANDY</p> <p><b>\$19<sup>99</sup></b></p>

\*This ad expires on 06/18/11 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice.  
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.